

Իրանահայ համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՐՑՈՒՌԻՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



MINISTRY OF DIASPORA OF THE
REPUBLIC OF ARMENIA

ՆԱԽԱՐԱՐ

MINISTER

"22" 03 2012 թ.
01 / 07.116050-12

Մեծ ցավով ստացանք Իրան-Հայաստան երթուղով ավտոբուսի վթարի մասին գոյժը, որի հետևանքով կան զոհեր և վիրավորներ մեր հայրենակիցների շրջանում:

Խորին ցավակցություն եմ հայտնում զոհվածների ընտանիքներին և հարազատներին, ինչպես նաև ողջ իրանահայ համայնքին, ցանկանում եմ համբերություն, ուժ և տոկոսություն զոհվածների հարազատներին ու մեղմավորներին:

Վթարի արդյունքում վիրավորված մեր հայրենակիցներին մաղթում եմ շուտափոյթ ապաքինում:

ՀՐԱՆՈՒՑ ՀԱՎՈՐՅԱՆ

0010, ՀՀ Երևան, 4 Մարտի 201
261 Տեղ. Վնայրյան, 0010



Ամ: (+374 10) 58 91 55
Ֆա: (+374 10) 58 91 57
Էլ. փոստ: minis@mdia.gov.am

Իրանից Հայաստան ուղևորված ավտոբուսի վթարի հետևանքով հայեր են զոհվել



Իրանում դեպի Հայաստան ուղևորված ավտոբուսի վթարի հետևանքով երեք հայ է զոհվել:

Հայաստանի արտաքին գործերի նախարարի մամուլի քարտուղար Տիգրան Բալայանն թղթակցին տեղեկացրեց, որ նրանք Իրանի քաղաքացիներ են: «Վթարի հետ կապված մանրամասները ճշտում է Իրանում Հայաստանի դեսպանատունը», -ասաց Տիգրան Բալայանը: Նախնական տվյալներով՝ Իրանից Հայաստան ուղևորված ավտոբուսի վթարի հետևանքով 10 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ: Ուղևորների մեծ մասն իրանցիներ են, մոտ տասը՝ հայեր: Վթարը, նախնական վարկածով, ավտոբուսի անիվի պայթյունի հետևանք է: Վիրավորները տեղափոխվել են հիվանդանոց:

Ռոբերտ Բեգլարեանը եւ Կարէն Խանլարիւն Իրանահայեր Լրատու Ցանց



Իրանահայության պատգամաւորները Իսլամական խորհրդարանում

Աւարտեց Իրանի իսլ. խորհրդարանի ընտրութիւնները եւ արդէն իսկ պարզւել են դրանց արդիւնքները՝ գոնէ իրանահայութեան հետ առնչուող բաժնով, թէեւ նախքան ընտրութիւններն իսկ, ինչպէս գրել էինք, յայտնի էին դրանց արդիւնքները մրցակցութիւն գոյութիւն չունենալու պատճառով, այդուհանդերձ կայացած համարելով ընտրութիւններն, յայտարարենք, որ Թեհրանի եւ հիւսիսային իրանահայութեան պատգամաւոր է ընտրւել դոկտ. Կարէն Խանլարիւն՝ 10857 քւէով, իսկ Սպահանի եւ հարաւային իրանահայութիւնը վերընտրել է պրն. Ռոբերտ Բեգլարեանին՝ 2570 քւէով: Յիշատակելի է որ այս առիթով յայտարարութիւններ են հրապարակել Թեհրանի հայոց թեմի առաջնորդ Ս. Սեպուհ արք. Սարգսեանն ու գործող պատգամաւոր պրն. Գէորգ Վարդանեանը, որոնք իրենց խորին շնորհակալութիւններն են յայտնել ժողովրդին՝ ընտրութիւններին մասնակցելու համար եւ շնորհաւորելով նորընտիր պատգամաւորներին նրանց մաղթել են եռանդուն եւ արդիւնաւէտ աշխատանք: Սրբազան Հայրն իր յայտարարութեան մէջ, ի մասնաւորի, համոզունք է յայտնել, որ պատգամաւորները իրենց լաւագոյնը պիտի անեն ծննդավայր հայրենիքի՝ Իրանի, կեանքի առաւել զարգացման եւ հայ համայնքի իրաւունքների պաշտպանութեան համար:

Սալմաստի երկրաշարժից (1933թ.)

Ազգային Առաջնորդարան, Թւարիզ – Բաղրուրթեամբ համեմատ տխուր յիշատակ

Ատրպատականի Հայոց Թեմի տարբեր քաղաքներում ապրող Սալմաստեցիներ սրտի կսկիծով յիշում են դեռ էւս, 1933 թւականին պատահած այն աղէտալի երկրաշարժը, որի զոհ է գնացել բազմաթիւ հայեր: Մինչեւ այսօր էլ ցոյց են տալիս երկրաշարժից աւերած մասերը, որոնք այդպէս էլ թողնելով, վերապրողներ քաղաքի մի այլ մասում կառուցել են իրենց բնակարանները եւ վերակսել կեանքը:

Հայաստան

Հայաստանը պատրաստվում է Իրանից նավթամթերք ներմուծել



Բնիկ Սալմաստեցի եւ Ազգային Առաջնորդարանի բարերար Տիար Համազասպ Ոսկանեանի Թաւրիզի բնակարանում, պատից կախւած մի պատմական լուսանկարի մասին է այս թղթակցութիւնը: Այն լուսանկարել է հանգուցեալ Հայկ Աճեմեանը, Քհակրածանօթ հասարակական գործիչ Տիար Ալպերթ Աճեմեանի պապը, երկրաշարժից անմիջապէս յետոյ աղէտահար շրջանը այցելած Թեմի քաջարի Առաջնորդ Հոգեւոյն Տ. Ներսէս Արք. Մելիք-Թանգեանի փափաքով: Լուսանկարում, ծառի տակ երեւում են նաեւ Ալոյի պատմական աղբիւրի աւերակները:

Առաջնորդ Սրբազանը արտասուաթոր ացքերով նայելով համատարած աւերածութեանը, տեսնում է մի կնոջ, որ իր նորածին երկուրեակների եւ անչափահաս անդրանիկ որդու հետ նստել է աւերակների վրայ: Մօտենալով նրանց, իմանում է թէ՛ տան քաջ հայրը՝ Օհաննէս, իր ընտանիքի անդամներին ազատելուց յետոյ փուլ եկող տնից, վերջին բուպէին, նրա ծոծրակին մի հաստ գերան է ընկնում: Այդպիսով նա մնում է աւերակների տակ եւ մահանում: Սրբազանը լուսանկարել է տալիս որբեւայրիի ընտանիքը: Նոյն լուսանկարի աջ անկիւնում, իր մայրիկի թեւերի մէջ գտնուող երկուրեակներից մէկն է ազգային բարերար Տիար Համազասպ Ոսկանեանը:

Այսօր, Սալմաստի բլուրներից մէկի վրայ, հանքային տաշւած սեւ տապանաքարերով լեցուն գերեզմանատանը հանգչում են, յանուն ընտանիքի իր կեանքը զոհած Օհաննէս Ոսկանեանի աճիւնները, բոլոր միւս անմեղ զոհերի հետ: Իսկ Տիար Համազասպ Ոսկանեան, ի շարս իր կատարած անցելի բարերարութիւնների, Առաջնորդարանի բարեգարդման ի խնդիր, Առաջնորդական գեղաքանդակ Աթոռ նւիրեց Թեմին, ի յիշատակ եւ յերախտագիտութիւն իր բազմաշարճար մայրիկին Հայկանոյշի:

Քաղցրութեամբ համեմած այս տխուր յիշատակը դարուց դար կրկնող մեր ժողովրդի պատմութեան մէկ հարազատ պատկերն է: Մի ժողովրդի կեանք, որը միշտ աւերում է, բայց վերստին յառնում, մոխիրների տակից դուրս եկող փիւնիկի նման...:



8-4-2012- Նավթամթերքի բաշխման իրանական ազգային ընկերության ղեկավարի հաղորդմամբ՝ Հայաստանը հետաքրքրված է Իրանից նավթամթերք ներմուծելով: Ջալիլ Սալարին Mehr լրատվական գործակալությանը հայտնել է, որ Վրաստանից նավթամթերք ներմուծելը տնտեսապէս արդարացված չէ Հայաստանի համար, և այդ պատճառով Հայաստանը ցանկանում է նավթամթերք ներմուծել Իրանից: Իրանի մանավոր սեկտորը նավթամթերքի սկզբնական փոխանցումները կկատարի ճանապարհային փոխադրումների եղանակով: Հիշեցնենք, որ փետրվարին Իրանն ու Հայաստանը կնքել էին համաձայանագիր, որի հիման վրա Իրանը բեզինն ու նավթամթերք կարտահանի Հայաստան: NIORDC-ը հայտնել է, որ Իրաքը, Հայաստանը, Աֆղանստանը և Պակիստանը ներկայումս ներմուծում են կամ պատրաստվում են Իրանից բենզին ներմուծել:

ՀՅԴ-ականի զինանոցում ոստիկանությունից գողացված զենք է ր



«Հայկական ժամանակ» օրաթերթը գրում է. ՀԶԾ-ին մոտ կանգնած աղբյուրը մեր թղթակցին սենսացիոն տեղեկություն է հաղորդել: Ըստ այդմ, փետրվարին Նոր Նորքում հայտնաբերված զենքի խոշոր խմբաքանակը կարող է կապ ունենալ ՀՀ Ոստիկանության գործերի հրամանատարի տեղակալ Վանիկ Մանուկյանի հետ: Նոր Նորքում հայտնաբերված տպավորիչ զինանոցը, եթե հիշում եք , պատկանում էր Դաշնակցության անդամ Արշավիր Գարապետյանին: Եվ ահա, պարզվում է, վարկած կա, որ սա ոստիկանության գործերից հափշտակված զենք է եղել, և այդ հափշտակության համար մարտի 3- ին, այսինքն՝ Նորքի զինանոցի բացահայտումից չորս օր անց, կալանավորվել է ՀՀ ոստիկանության գործերի հրամանատար սպառազինության գծով տեղակալ Վանիկ Մանուկյանը: Մեր տեղեկություններով, Սերժ Սարգսյանը այս գործը համարում է քաղաքական, որովհետև կասկածներ ունի

թե ոստիկանության զորքերից հափշտակված զենքը պետք է օգտագործվեր քաղաքական նպատակներով: Շշուկներ կան, ի դեպ, որ ՀՅԴ բյուրոյի ներկայացուցիչ Հրանտ Մարգարյանի տնից օրերս կատարված գողությունը ոչ թե գողություն է, այլ, ըստ էության, ոչ պաշտոնական խուզարկություն: Թե որքանով են իրական այս շշուկները, առայժմ դժվար է ասել:

ԱՎՅԻՄՆ ԼՎԻՐՎԱԾ ԱՆԱՀԻՏ ԱՍՏՎԱԾՈՒՆՈՒ ԱՐՁԱՆԻ ՄԱՍՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆ ՏԵՂԱՓՈՒՆԵԼՈՒՆ

Ըստ Հայաստանի երիտասարդական հիմնադրամից ստացված տեղեկության, երեկ ՀՀ-ում Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Միացյալ Թագավորության դեսպանատան մոտ Հայաստանի երիտասարդական հիմնադրամը կազմակերպել էր Անահիտ աստվածուհու արձանի մատուցները Բրիտանական թանգարանից Հայաստան տեղափոխելուն նվիրված ակցիա, որին մասնակցում էին հարյուրավոր երիտասարդներ: ՀԵՀ հոգաբարձուների խորհրդի համակարգող Կարեն Ավագյանը և ԿԳ նախարար Արմեն Աշոտյանը ՀՀ-ում Մեծ Բրիտանիայի դեսպան Քեթրին Ջեյն Լիչին են փոխանցել Անահիտ աստվածուհու արձանի մատուցները հայրենիք վերադարձնելու ուղերձի տեքստը՝ հիմնադրամի նախաձեռնությանը միացած ավելի քան 20.000 երիտասարդների ստորագրությամբ: Մայրության աստվածուհու արձանի մատուցները վերադարձնելուն նվիրված ստորագրությունները հանձնվեցին խորհրդանշական օր՝ մարտի 7-ին կանանց մեկամայակի մեկնարկի նախօրեին: Համահայկականի վերածված այս ակցիային միացել են նաև մի շարք սփյուռքահայ երիտասարդներ լուսանջելեսաբնակ Գեորգ Մարտիրոսյանի գլխավորությամբ: Նրանք ուղարկել են տարբեր երկրներից հավաքած 1063 ստորագրություն:

Արեւմտյան Ղայաստան

«1915 թվականի դեպքերի համար հայերը պահանջում են 15 միլիարդ դոլարի փոխհատուցում». թուրքական մամուլ



19-4-2012- Haber Türk-ի փոխանցմամբ՝ ապրիլի 12-ին ՄԱԿ-ում կազմակերպված «Հայոց ցեղասպանության

ընդունում» խորագրով սիմպոզիումի ժամանակ հայկական կողմը 1915 թվականի իրադարձությունների (Հայոց ցեղասպանություն) հետ կապված Թուրքիայից պահանջել է 15 միլիարդ դոլարի փոխհատուցում: Միմյուրյալովում ելույթ ունեցող հայկական պատվիրակության ղեկավար Կառլա Կարապետյանը հենց այդքան է գնահատել 1915 թվականին կրած վնասը: Նա ընդգծել է, որ Գերմանիան 1950-ական թվականներից սկսած՝ 60 միլիարդ դոլարի փոխհատուցում է վճարել Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ 6 միլիոն հրեաներին սպանելու համար:

Դիարբեքիում հայերից եւ ասորիներից կազմված քաղաքային խորհուրդ է ստեղծվել

Թուրքիայի Դիարբեքիի Սուրի քաղաքապետարանում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների մասնակցությամբ ստեղծվել է 40 հոգուց բաղկացած քաղաքային խորհուրդ (Kırklar meclisi): Firat գործակալության փոխանցմամբ՝ Սուրի քաղաքապետի նախաձեռնությամբ ստեղծված խորհրդում ընդգրկվել են Դիարբեքիում ապրող, հայեր, ասորիներ, եզդիներ, թուրքմեններ, կրոնական տարբեր համայնքներ, Դիարբեքիի տարբեր հասարակական կազմակերպություններ, ինչպես նաև Սուրի քաղաքապետ Աբդուլլահ Դեմիրբաշը, փոխքաղաքապետ Ալի Ալթընբայնաքը և քաղաքապետի խորհրդական Նաքշի Մայարը: Սուրի քաղաքապետարանի դահլիճում նորաստեղծ քաղաքային խորհրդի առաջին նիստը ղեկավարել է Սուրի քաղաքապետ Աբդուլլահ Դեմիրբաշը, ով նշել է, թե այս նախաձեռնության նպատակն է՝ քաղաքապետարանում չներկայացվածները եւս մասնակցեն քաղաքի ղեկավարմանը: Նշենք, որ մեկ ամիս առաջ Սուրի քաղաքապետարանի կողմից հայերենի եռամսյա դասընթացներ են կազմակերպվել: Ավելի վաղ Սուրի քաղաքապետ Աբդուլլահ Դեմիրբաշը թուրքերենով է հայերենով հրատարակել է հայկական մի շարք հեքիաթներ, այդ թվում Թումանյանի «Մի կաթիլ մեղրը»: Դեմիրբաշի նախաձեռնությամբ նաև Դիարբեքիը ներկայացնող տուրիստական ուղեցույցը տպագրվել է նաև հայերենով: Սուրի շրջան մտնող ճանապարհների մոտ դրված ցուցանակների վրա կա նաև հայերենով գրված «Բարի եկաք» գրությունը:

Դիարբեքիի հայ կական Սուրբ Կիրակոս եկեղեցու մ նշել են Սուրբ Զատիկը

News.am. 16-4-2012- Դիարբեքի հայկական Սուրբ Կիրակոս եկեղեցում վերանորոգումից հետո առաջին անգամ Սուրբ Զատիկի պատարագն է մատուցվել: Թուրքական Haberx-ի փոխանցմամբ՝ Սուրբ Կիրակոսում Սուրբ Զատիկի պատարագն իրականացվել է Հաթայ նահանգում գտնվող «Քառասուն մանուկ»

եկեղեցու հոգևոր սպասավոր Ավետիս Թաբաշյանի գլխավորությամբ: Պատարագին բացի Դիարբեքիի հայերից մասնակցել է նաև Սուրի քաղաքապետ Աբդուլլահ Դեմիրբաշը եւ այլ պաշտոնյաներ: Նշենք, որ Մերձավոր Արեւելքի ամենամեծ եկեղեցիներից մեկի՝ Սուրբ Կիրակոսի վերաբացումն ու օծումը տեղի է ունեցել 2011-ի հոկտեմբերի 22-ին, իսկ առաջին պատարագը մեկ օր անց՝ հոկտեմբերի 23-ին: Դիարբեքիի Սուրբ Կիրակոս եկեղեցին կառուցվել է 1376-ին, Հանչեփեք թաղամասում, որը տեղի մահմեդականները անվանել են «գյավուրների թաղամաս» քանի որ մեծ թվով քրիստոնյաներ են ապրել մինչև Հայոց ցեղասպանությունը:

Թուրքիայում հայկական եկեղեցին, դպրոցն ու գերեզմանատունը վերադարձվել են հայ համայնքին



Tert.am. 5-4-2012- Թուրքիայի հիմնադրամների գլխավոր տնօրինությունը որոշում է կայացրել 6 գերեզմանատներ ազգային փոքրամասնությունների վերադարձնելու մասին: Հիմնադրամների խորհուրդը քննել է 5 համայնքների պատկանող գերեզմանատները վերադարձնելու մասին դիմումները և հիմնվելով 2011 թ. օգոստոսին ընդունված հռչակագրի վրա, որոշում է կայացրել: Ինչպես տեղեկացնում է «Ակոս»-ը, այս որոշմամբ իրական տերերին կվերադարձվեն Բեյոլլու թաղամասի հույն ուղղափառ եկեղեցին և դպրոցը, Սուրբ Հրեշտակապետ հայկական եկեղեցին, դպրոցն ու գերեզմանատունը, Քաղըքոյի Իսրայելի սինագոգի հիմնադրամը վերադարձնել: Հիշեցնենք, որ հռչակագիրը ստորագրվել էր 2011 թ.-ի օգոստոսի 28-ին Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի կողմից՝ քրիստոնեական ու հրեական եկեղեցիները և 1936 թ-ից բռնազավթված գույքը վերադարձնելու մասին: Ըստ այդ հրամանագրի՝ փոքրամասնություններին պետք է վերադարձվեն հիվանդանոցները, մանկատները, դպրոցները ու գերեզմանոցների տարածքները:

Վանում իրական կրակ են բացել հային մարմնավորող դերասանի վրա

HayNews.am.3-4-2012-Ներկայիս Թուրքիայի կազմում գտնվող Վանի նահանգում պատրաստվում են նշել «Արձեշի ազատագրումը հայերից»: Թուրքական խեղկատակության այս վառ դրսևորումը, սակայն, չի

անցել առանց միջադեպի: Երբ «ազատագրմանը» նվիրված միջոցառման փորձն է ընթացել, դերասաններն իրար վրա կրակ են արձակել, որը պարզվել է՝ իրական է եղել: Կազմակերպիչները սխալմամբ իրական փամփուշտներ են տվել դերասաններին, փոխանցում է «Բիանեթը»: Եվ փորձի ժամանակ, երբ ըստ սցենարի՝ թուրք զինվորները կրակ են բացել հայ զինվորներին մարմնավորող դերասանների վրա, հրաձգությունն իրական է դուրս եկել: Դերասաններից մեկը ծանր վիրավորվել է: Վերջինիս տեղափոխել են հիվանդանոց. նրա վիճակը ծանր է: Վանի դատախազությունն արդեն հետաքննություն է սկսել այս դեպքի կապակցությամբ:

Թուրքիայի հայ քաղաքացիները սկսել են սպառնալիքներ ստանալ

Ստամբուլում բնակվող Թուրքիայի հայազգի քաղաքացին իր այգում հայտնաբերել է «Հայերի կեղծիքներն աննկատ մի թողեք» գրությամբ մի գլխարկ:

Հայը, ում անվան միայն առաջին տառերն են նշվում՝ Է.Ա., գլխարկը հայտնաբերել է փետրվարի 27-ին՝ Ստամբուլում տեղի ունեցած հակահայ խռոշոր ցույցի հաջորդ օրը: Անվտանգության տեսախցիկների միջոցով Է.Ա.-ն պարզել է, որ հայաստյաց գրությամբ գլխարկն իր այգի է նետել հարևաններից մեկը, ով մասնագիտությամբ փաստաբան է: Է.Ա.ն դիմել է ոստիկանությունը և հայց ներկայացրել թուրք հարևանի դեմ: Հայ քաղաքացին «Միլիյեթ» թերթի թղթակցի հետ զրույցում նշել է, որ «նախկինում նույնպես ենթարկվել է վիրավորանքների և վատ վերաբերմունքի հայ լինելու պատճառով»: Նշենք, որ փետրվարի 26-ին Ստամբուլում թուրք և ադրբեջանցի ազգայնամուլները պաշտոնական Բաքվի և Անկարայի աջակցությամբ բազմազահազար ցույց էին կազմակերպել, որը կապել էին հորինված «Խոջալուի ցեղասպանության» «տարելիցի» հետ: Ցույցն ուղեկցվել էր ուժեղ հակահայ տրամադրություններով: Ամենուր կարելի էր նկատել հայերին վիրավորող պաստառներ, որոնցից մեկի վրա գրված էր. «Բոլորը հայ էք, բոլորը անբարոյական էք»: Այս պաստառների կապակցությամբ թուրքական ոստիկանությունն արդեն հետաքննություն է սկսել: Ցույցի կազմակերպիչների դեմ նաև հայցեր են ներկայացվել թուրքական իրավապաշտպան կազմակերպությունների կողմից:

Թուրքիայում յուրաքանչյուր 3-րդ սպանված լրագրողը էթնիկ հայ է

«Ձերբակալված լրագրողների համերաշխության հարթակ» թուրքական կազմակերպությունը հրապարակել է 1909 թվականից մինչ այժմ Թուրքիայում 112 սպանված լրագրողների ցուցակը: Նրանց մեջ շատ են ազգությամբ հայերն ու քրդերը: Կազմակերպության մամուլի խոսնակ Նեջաթի Աբայը, ներկայացնելով այդ ցուցակը, հայտնել է, որ Թուրքիայում սպանված առաջին լրագրողը եղել է Հասան Ֆեհմինը, ում մահվան օրն էլ՝ ապրիլի 6-ը, կազմակերպության կողմից ճանաչվել է որպես «սպանված լրագրողների հիշատակի



օր»: Աբայի խոսքերով, 1909 թվականի ապրիլի 6-ից մինչ օրս Թուրքիայում թիրախում են թուրքական և քրդական լրատվամիջոցները, ընդդիմադիր թերթերն ու լրագրողները, որոնց մեծ մասը սպանվել է 1970-ական, 1980-ական և 1990-ական թվականներին: Դրանով հանդերձ, հայ գրողների ու լրագրողների մեծ մասը սպանվել են Հայոց ցեղասպանության ընթացքում: «1915 թվականի ապրիլի 24-ին Պոլսում ձերբակալված և արտրված 220 հայ մտավորականների մեջ 32 լրագրող և գրող է եղել: Նրանք բոլորն էլ սպանվել են արտրի ընթացքում. Գրիգոր Ջոհրայ, Սիամանթո, Սարգիս Մինասյան, Արմեն Դոբյան, Ռուբեն Զարդարյան: Նրանցից շատերի գերեզմաններն անգամ հայտնի չեն: 2007 թվականի հունվարի 19-ին Ստամբուլում սպանված «Ակոս» թերթի խմբագիր Հրանտ Դինքն այդ թիվը 33-ի հասցրեց», - ասել է Նեջաթի Աբայը:

Արևմտյան Հայաստանում նավթի հանքավայր են հայտնաբերել

Ներկայիս Թուրքիայի տարածքում գտնվող Ադըլյաման քաղաքի մոտակայքում հայտնաբերվել է նավթի հանքավայր: Այս մասին հայտարարել է Թուրքիայի էներգետիկայի և բնական պաշարների նախարար Թաներ Յըլդըզը, տեղեկացնում է թուրքական «Ջաման» պարբերականը: Նշվում է, որ թեև նավթի պաշարները վերոնշյալ հանքավայրում շատ չեն, սակայն որակյալ են: Նախատեսվում է հանքավայրից արդյունահանել օրական 500 բարել նավթ: Ավելի վաղ ամերիկացիները նավթ էին հայտնաբերել Բաթման նահանգում, որտեղ գտնվող հանքավայրից օրական 2700 բարել նավթ է արդյունահանվում:

Սիյուռք

ԴԵՆԶԹԱՇԻ ԴԵՐԸ ԴԻՆԶԻ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ Պրոֆ. Թաներ Աբչանը թուրքական «Թարաֆ» թերթում լույս ընծայած իր հոդվածում նմանություններ է հայտնաբերել Հրանտ Դինքի և 1915-ի ցեղասպանության պարագլուխ Թալեաթ փաշայի սպանության ձեռքում և բացատրել, թե հունվարի 13-ին մահացած Ռաուֆ Դենքթաշը Թալեաթի սպանության վրեժը լուծել էր Հրանտ Դինքի սպանությունը կազմակերպելով «Էրզենեքոն» ծայրահեղական «խորքային պետության» միջոցով, տեղեկացնում է Կանադայից «Ապագայ»

շաբաթաթերթը: Նա հայտնել է, որ Դենքթաշն այդ կազմակերպության մաս էր կազմում: Նաև նախագահն էր «Թալեաթ փաշա» հանձնախմբի, որի նպատակն էր վերականգնել դահձապետի վարկն ու հեղինակությունը զանազան միջոցառումներով Լոզանում, Բեռլինում, Փարիզում և Հյուսիսային Կիպրոսում: Այդ միջոցառումները անցկացվել են «Հայոց ցեղասպանությունը սուտ է» կարգախոսի ներքո: «Մենք այս պետությունը կառուցել ենք 1915-ի հիմքերի վրա: Դինքի ոճրին ավելի լույս սփռելը հարցականի տակ դնել է նշանակում այս պետության գոյությունը և խարխիլել դրա հիմնաքարերը: Մենք բոլորս Ռաուֆ Դենքթաշ ենք և միշտ մնալու ենք Թալեաթ փաշայի կողմնակիցները», հորդորել են Դենքթաշի հուղարկավորությանը մասնակից սզակիրները: Դենքթաշը թուրք կիպրացի էր, որ Հյուսիսային Կիպրոսի բռնագրավումից հետո դարձել էր դրա նախագահը:

Դամասկոսում 10 հայ է վիրավորվել, Հալեպում մեկ հայ զոհվել է



Ըստ որոշ աղբյուրների՝ Դամասկոսում այսօր տեղի ունեցած պայթյունի հետևանքով 10 հայ է վիրավորվել: Թե իրականում քանի հայ է տուժել կամ զոհվել այս միջադեպերից, և թե կոնկրետ ինչի հետևանքով են տուժել, HayNews.am-ը փորձեց ճշտել ՀՀ արտգործնախարարության մամուլի խոսնակ Տիգրան Բալայանից: Վերջինս հաղորդեց. «Երկու օր առաջ Դամասկոսում տեղի է ունցել պայթյուն, որի հետևանքով 10 հայ է վիրավորվել: Երեկ Հալեպում տեղի ունեցած պայթյունից մեկ հայ կին է զոհվել: Բսկ այսօր դեսպանատան մոտ՝ շուրջ 200 մետր հեռավորության վրա փոխհրաձգություն է տեղի ունեցել, որի հետևանքով ոչ դեսպանատան աշխատակիցներ, ոչ տեղի հայերի որևէ մեկը չի տուժել»:

Թուրքիայի հայկական դպրոցներում թույլատրվել է հայաստանցիների ուսուցումը Թուրքիայում նոր օրենք է մտել գործածության մեջ, որով թույլատրվում է այդ երկրի քաղաքացիություն չունեցող անձանց երեխաներին հաճախել մասնավոր դպրոցներ:

Թուրքիայի պաշտոնաթերթում հրատարակված նոր փոփոխությունները թուրքական մամուլը հրապարակել է «ցնցող»: Այսպիսով, ազգային փոքրամասնությունների

պատկանող մասնավոր դպրոցներում կարող են սովորել



նաև Թուրքիայի քաղաքացի չհանդիսացող երեխաներ: Մինչ այս թուրքական օրենքներով արգելված էր Թուրքիայի քաղաքացի չհանդիսացող անձանց կրթությունը դպրոցներում: Միայն վերջին ուստարում Թուրքիայի կառավարությունը թույլատրել է ՀՀ-ից ներգաղթածների երեխաներին մասնակցել դասերի, սակայն նրանց կրթության վկայական չէր տրվում:

Միջազգային

Թուրքիան պետք է ներողություն խնդրի հայերից, փոխհատուցում վճարի. Ռադիքալ



«Թուրքիան պետք է ներողություն խնդրի հայերից, ինչպես նաև նրանց փոխհատուցում վճարի պատճառված նյութական վնասների համար՝ ներքին իրավական ուղիներ ստեղծելով», - նման տողով է սկսում թուրքական ձախակողմյան «Ռադիքալ» պարբերականի հոդվածագիր Օրհան Քեմալ Ջենգիզն իր «Իրավունքը, փոխհատուցումն ու լուծումը» վերտառությամբ հոդվածը:

«Հնարավոր է արդյոք Թուրքիայի դեմ Հայկական հարցի հետ կապված որևէ դատական գործ բացվի միջազգային դատարաններում և պարտադրվի փոխհատուցում վճարել: Այս հարցին իմ պատասխանը կարճ է և հստակ: Ոչ, հնարավոր չէ», - նշում է Ջենգիզն, բայց և առաջարկում Թուրքիային ինքնակամ ներողություն խնդրել հայերից և փոխհատուցում վճարել: Թուրք հոդվածագիրը նշում է մի քանի դատարաններ (Հաագայի միջազգային քրեական դատարան, Մարդու իրավունքների եվրոպական դատարան և այլն) և օրինակներ բերում, թե Հաագայում անհնար կլինի դատական գործ բացել, քանի որ հնարավոր մեղադրյալներից (Հայոց ցեղասպանության կազմակերպիչներից-խմբ) և ոչ մեկը կենդանի չէ: Անդրադառնալով ՄԻԵԴ-ին՝ Ջենգիզը գտնում է, որ եվրոպական դատարանում հնարավոր չէ

ցեղասպանությունների վերաբերյալ դատական գործ բացել:

Հոդվածագիրն առաջարկում է խնդրի լուծման իր տարբերակը.

«Թուրքիան ճիշտ ձևով կարող է լուծել այս խնդիրը: Մենք պետք է ընդունեք, որ 1915 թվականի դեպքերը մեծ մարդկային ողբերգություն են: Պետք է քննադատենք այն կազմակերպած «Միություն և առաջադիմություն» կուսակցությանն ու նրա դրածոներին: Այս ողբերգական դեպքերին գոհ գնացած մեր հայ եղբայրներից և նրանց սերունդներից պետք է ներողություն խնդրենք: Ամեն դեպքում, Թուրքիան միայն ներողություն խնդրելով չպետք է բավարարվի: Թուրքիան պետք է փոխհատուցում տրամադրի նյութական վնասների համար, որոնք կրել են հայերը: Հատուկ օրենքներ պետք է մշակվեն, որոնց միջոցով թուրքական կողմը կվճարի փոխհատուցում Օսմանյան կայսրությունում բնակվող հայերի սերունդներին: Այս ամենից հետո Թուրքիան, սեղանի շուրջ նստելով Միացյալ Նահանգների, Եվրամիության և Հայաստանի հետ, կարող է մի միջազգային համաձայնագիր կնքել: Ըստ այդ համաձայնագրի՝ հայերի կրած վնասների վերաբերյալ գործերը կքննեն միայն թուրքական դատարանները: Հավատացե՛ք՝ Թուրքիան այս ամենը կարող է հեշտությամբ անել, և հարցը կլուծվի: Սակայն մենքն ինքներս պարտավոր են դեն նետել ժխտողականությունը և այս երկրից վտարված Օսմանյան կայսրությունում բնակված հայերի մեծ ողբերգությանը նայենք բաց սրտով, պետք է անկեղծ և պարկեշտ լինենք: Համոզված եղե՛ք՝ մնացածը հեշտությամբ կհաղթահարենք», - նշում է Ջենգիզը: Նշենք, որ ավելի վաղ Ջենգիզը մեկ այլ հոդված էր գրել Հայոց ցեղասպանության մասին: Վերջինս նշել էր, որ Մեծ Եղեռնն աշխարհի մի շարք պետություններ չեն ճանաչում ուղղակի սեփական շահերից ելնելով, այլ ոչ թե Հայոց ցեղասպանության գոյությանը չհավատալու պատճառով:

Թուրքիան պետք է ճանաչի Հայոց ցեղասպանությունը եւ հողային փոխհատուցում վճարի հայերին. թուրք երաժիշտ

Ստամբուլի Բիլգի համալսարանի «Հակակապիտալիստ ուսանողների ակումբ»-ը ապրիլի 17-ին կազմակերպել էր քննարկում. «Ի՞նչ է եղել ապրիլի 24-ին, ի՞նչ է եղել հունվարի 19-ին» խորագրով:

«Հակակապիտալիստ ուսանողների ակումբ»-ի կայքի փոխանցմամբ՝ Բիլգի համալսարանում Հայոց ցեղասպանության թեմային նվիրված քննարկմանը մասնակցել են ստամբուլահայ գրող Բագրատ Էստուկյանը, սոցիոլոգ Արուս Յումուրը, երաժիշտ Թուգա Թուգուն եւ բազմաթիվ ուսանողներ:

Բագրատ Էստուկյանը նշել է, թե 30 տարի առաջ չէր էլ կարող պատկերացնել, որ համալսարանում թուրքերի հետ նման թեմայով հնարավոր կլիներ խոսել:

Հանդիպման բանախոսներից Թուգա Թուգուն թուրքերը ստիպված են ընդունել իրականությունը՝ առեւտրվելով Հայոց ցեղասպանության հետ: Նա նշել է, թե անհրաժեշտ է, որ Թուրքիան հայերին փոխհատուցում վճարի, այդ թվում է հողային:

Թուգա Թուգունը ներկաներին կոչ է արել ապրիլի 24-ին երեկոյան 19:15-ին լինել Ստամբուլի Թաքսիմի հրապարակում՝ հիշատակելու 1915-ի գոհերին:

Հռոմում բացվել է մինչ օրս գաղտնի պահվող Վատիկանի հին փաստաթղթերը



Իտալիայի մայրաքաղաք Հռոմում բացվել է մինչ օրս գաղտնի պահվող Վատիկանի հին փաստաթղթերի ցուցահանդեսը, որոնք առաջին անգամ են ներկայացվում է հասարակության լայն շրջանակներին:

«Պրավդա.ռու»-ն հաղորդում է, որ Lux in Arcana («Լույսը գաղտնիքի մեջ») ցուցադրության ժամանակ ներկայացվել է մոտ հարյուր անգին փաստաթուղթ պապական հայտնի արխիվից, որոնք ընդգրկում են եվրոպական եւ համաշխարհային պատմության ավելի քան 15 դար կազմող ժամանակաշրջան: Մասնավորապես, խոսքը հին ձեռագրերի մասին է, որտեղ տեղեկություններ կան ինկվիզիցիայի ամենաաղմկահարույց գործընթացների մասին, ինչպես նաեւ խոշոր գիտնականների եւ իմաստասերների ձեռագրեր:

Ձեռագրերի ցուցադրությունը նվիրված է գաղտնի արխիվի 400 ամյակին: Թղթերի մեծամասնությունը մինչ այդ տեսել են միայն գիտնականները, գրում է «Վեստի.ռու»-ն: Ընդ որում, գիտնականներից հատուկ «երաշխավորագիր» են պահանջել արխիվներից օգտվելու թույլտվություն տալու համար, իսկ այդ երաշխավորագիրը, բնականաբար, բոլորին չէ, որ տրվել է: Նշենք, որ Վատիկանի արխիվներում տեղեկություններ կան Հայոց ցեղասպանության վերաբերյալ: Դեռ 2011-ին Վատիկանի արխիվների պատասխանատու Մոնսենյոր Սերժիո Պազանիի արած հայտարարությունից հետո, թե հաջորդ տարի Հռոմում կազմակերպվելիք Lux in Arcana ցուցահանդեսում Հայոց ցեղասպանության հետ կապված գաղտնի փաստաթղթեր են հրապարակվելու, թուրքական Vatan-ը հարցազրույց էր արել նրա հետ: Պազանին նշել էր, թե 1896-ին այն ժամանակվա Հռոմի Պապ Լեո 13-րդը սուլթանին կոչ է արել

կարեկցանք ցուցաբերել եւ դադարեցնել իրականացվող ցեղասպանությունը: Պազանին շեշտել էր, թե Վատիկանի գաղտնի արխիվներում գտնվող Հայոց ցեղասպանության հետ կապված փաստաթղթերը կհրապարակվեն մեկ հատորանոց առանձին գրքով եւ այդ գրքից օրինակներ բերել: Էրզրումցի մի ակննատեսի վկայություն. «Տեսա, թե ինչպես են բազմաթիվ երեխաների կոտորում: Իմ զարմիկը 2 տարեկան երեխան ուսին պահած փախչում էր տնից, սակայն նրա վրա կրակեցին՝ տապալելով գետնին: 2 զինվոր մոտեցան նրան եւ երեխայի աչքի առաջ սպանեցին...: Տեսա, թե ինչպես են սպանում մեր քաղաքի հոգեւոր առաջնորդին: Աչքերը հանել էին, մորուքը՝ պոկել: Մինչ նրան սպանելը, զինվորները ստիպել էին նրան պարել»:

Սուլթաֆա Սուլեյման անունով թուրք զինվորի վկայությունը. «Մտանք հայկական գյուղեր եւ առանց տարիք եւ սեռ հաշվի առնելու բոլորին սպանեցինք: Մեր հետ գյուղ եկած քրդերը թալանում էին հայերի տները: Բազմաթիվ տարեց եւ հաշմանաղամ հայեր թաքնվել էին քաղաքի կենտրոնում գտնվող դպրոցում, սակայն հրաման կար եւ նրանց էլ սպանեցինք: Գելիզուզան գյուղում 800 հայ սպանվեց կամ այրվեց: Հայր Հովհաննեսի աչքերը հանել էին, մորուքը, քիթը եւ ականջները կտրել: Ես ոչ մի երեխա չեմ սպանել, նույնիսկ 2 երեխա եմ փրկել: Նրանց 3 օր թաքցրել եմ իմ վրանում, սակայն մի օր մտա վրան եւ նրանց մարմինները մասնատված գտա»:

Թուրքիայում 103 տարում 112 լրագրող է սպանվել. 33-ը հայ



Tert.am. 4-4-2012- Թուրքիայում 1909 թ. -ից մինչ օրս 112 լրագրող է սպանվել: Նրանց մեջ շատ են ազգությամբ հայերն ու քրդերը: «Ձերբակալված լրագրողների համերաշխության պլատֆորմի» մամուլի խոսնակ Նեջաթի Աբայը ներկայացրել է 1909 թ. -ից մինչև հիմա սպանված լրագրողների ցուցակը: Թուրքիայում սպանված առաջին լրագրողը եղել է Հասան Ֆեհմին, ում մահվան օրն էլ՝ ապրիլի 6-ին՝ կազմակերպությունը նշում է որպես «սպանված լրագրողների հիշատակի օր»: 1909 թ. -ի ապրիլի 6-ից մինչ օրս Թուրքիայում թիրախում են թուրքական և քրդական լրատվամիջոցները, ընդդիմադիր թերթերն ու լրագրողները, ասել է Աբայը: Լրագրողների մեծ մասը սպանվել է 1970-ական, 1980-ական և 1990-ական թվականներին: Հայ գրողների ու լրագրողների մեծ մասը

սպանվել են 1915 թ. -ի ընթացքում, միակ բացառությունը 2007 թ. հունվարի 19-ին սպանված «Ակոս» թերթի խմբագիր Հրանտ Դինքն է, ով Թուրքիայում սպանված 33-րդ հայազգի լրագրողն է: «1915 թ-ի ապրիլի 24-ին Պոլսում ձերբակալված և աքտրված 220 հայ մտավորականների, մեջ 32 լրագրող և գրող կար: Նրանք բոլորն էլ սպանվեցին աքտրի ընթացքում` Գրիգոր Զոհրապ, Սիամանթո, Մարգիս Մինասյան, Արմեն Դոբյան, Ռուբեն Զարդարյան: Նրանցից շատերի գերեզմաններն անգամ հայտնի չեն: 2007 թ-ի հունվարի 19-ին Ստամբուլում սպանված «Ակոս» թերթի խմբագիր Հրանտ Դինքը այդ թիվը 33-ի հասցրեց», - ասել է Նեջաթի Աբայը: 1990-1994 թվականների ընթացքում 18 քուրդ լրագրող է սպանվել: 1992 թ.-ի մայիսի 30-ին ստեղծված և 1994 թ.-ի ապրիլին փակված «Ազատ օրակարգ» թերթը հարձակումների թիրախում էր: Կազմակերպությունը նաև հրապարակել է 112 հոգուց բաղկացած ցուցակը:

Քրիստոնյա հոգևորականները գայրացած են Թուրքիայում քրիստոնյաների վրա շարունակական հարձակումներից



Tert.am. 12-4-2012- Թուրքիայի քրիստոնյա հոգևորականները մտահոգություն են հայտնել Թուրքիայում աճող սպառնալիքների վերաբերյալ, որոնց հետ նրանք բախվում են ապրիլի 7-ին Ստամբուլի բողոքական եկեղեցու քահանա Մեմիհ Մերքեքի վրա հարձակումից հետո: «Քրիստոնյա հոգևորականների դեմ հարձակումները կարճ ժամանակով դադարել էին, սակայն վերջին շրջանում դրանք հաճախակիացել են: Մենք տատանվում ենք եկեղեցու դռները բացելուց և հավատացյալներին ներս թողնելուց առաջ», - Hürriyet Daily News-ի հետ զրույցում հայտարարել է Ստամբուլի Գեդիքփաշա թաղամասի հայկական բողոքական եկեղեցու քահանա Գրիգոր Աղաբալօղլուն: Ապրիլի 7-ի երեկոյան` Զատիկին նվիրված պատարագից անմիջապես հետո երեք անհայտ անձինք հարձակվել և ծեծի են ենթարկել Մերքեք քահանային: «Երեքն էին, մտավորապես 18 տարեկան: Գլխաշորերով էին: Նրանք ասացին, որ պատրաստվում են սպանել ինձ, եթե ես չկարդամ «Քելիմե Սահադեթը» (իսլամական կրոնական խոստովանությունը), ինչից հետո ինձ ծեծի ենթարկեցին», - ասել է նա Hürriyet Daily News-ին: Նրա կարծիքով հարձակումը ամենևին պատահական չի եղել: Իսկ Սամսունի Ազապե բողոքական եկեղեցու քահանա

Օրհան Փըջաքլարն ասել է, որ վերջին 4 տարիների ընթացքում նրան 24 ժամ թիկնապահեր են պաշտպանում իր դեմ մահափորձի պատրաստման բացահայտումից հետո:

«Միջազգային»


Թուրք ուսանողներն իրար ծեծել են հայերին վիրավորող պաստառների պատճառով

Թուրքիայում հակահայ տրամադրությունների ալիքը չի նվազում, սակայն այդ ամենին զուգահեռ գրանցվում են նաև հետաքրքիր միջադեպեր:

Ինչպես տեղեկացնում է թուրքական մամուլը, Անկարայի համալսարանի Ջեբեջի մասնաշենքում ընդհարում է տեղի ունեցել ուսանողական երկու խմբերի միջև, ինչի պատճառը եղել են հայաստյաց պաստառները: Մասնավորապես, ուսանողների մի խումբն իր բողոքն է հայտնել հայերի նկատմամբ վիրավորանք պարունակող պաստառների դեմ, որոնց պարզվել էին փետրվարի 26-ին Ստամբուլում տեղի ունեցած հայաստյաց ցույցի ժամանակ: Ուսանողների խումբը հայերին վիրավորող կոչերի դեմ բողոքի ձայն է բարձրացրել` դրանք քննադատող պաստառներ կպցնելով համալսարանի պատերին:

Սակայն ազգայնական տրամադրված մեկ այլ խումբ սկսել է պատռել այդ պաստառները, ինչին հետևել է զանգվածային ծեծկռուտքը: Ծեծկռուտքի ժամանակ ուսանողներն միմյանց հարվածել են քարերով և փայտերով: Ոստիկանական ուժերի միջամտությունից հետո կողմերին հաջողվել է բաժանել: Կան նաև վիրավորներ, ինչպես նաև ձերբակալվածներ:

Թուրքիան կրոնական ազատությունները սահմանափակող 16 երկրների շարքում է



Թուրքիան հերթական անգամ հայտնվել է այլադավանների դեմ բռնություն և սահմանափակումներ կիրառող երկրների ցուցակում:

Այս անգամ Թուրքիան տեղ է գտել Միացյալ Նահանգների կրոնական ազատությունների հանձնաժողովի կազմած ամենամյա զեկույցում, որտեղ նշվում են տարբեր դավանանքների ազատության նկատմամբ անհանդուրժող վերաբերմունք ցույց տվող պետությունները:

Զեկույցում տեղ են գտել 16 երկրներ: Թուրքիայի հետ մեկտեղ ցուցակում են նաև Իրանը, Իրաքը, Չինաստանը, Սաուդյան Արաբիան, Պակիստանը, Սուդանը և

Տաջիկստանը:

Ձեկույցում նշված է, որ Թուրքիան սահմանափակում է ոչ մուսուլմանների կրոնական ազատությունները «անընդհատ» և «ակնհայտ»: ԱՄՆ-ում Թուրքիայի դեսպան Նամըք Թանն արդեն արձագանքել է նշելով, թե «զեկույցն արդար չէ, քանի որ վերջերս Թուրքիայում օրենք են ընդունել, որով կրոնական փոքրամասնություններին հետ են վերադարձնում պետության կողմից խլված գույքը»:

Հայերը մեծ տառապանքներ են կրել եւ հեռացել, սակայն կորցնողը մենք ենք եղել. Դիարբեքիրի քաղաքապետ

Աշխարհի ասորիների խորհրդի նախագահ Ջոնի Մետոյի գլխավորած պատվիրակությունը հանդիպում է անցկացրել Դիարբեքիրի քաղաքապետ Օսման Բայդեմիրի հետ: Թուրքական Haberler-ի փոխանցմամբ Դիարբեքիրի քաղաքապետը նշել է, թե 20-րդ դարի սկզբին Դիարբեքիրում շատ ցավալի իրադարձություններ են տեղի ունեցել, որի հետեւանքով Դիարբեքիրի համար քրդերի չափ քրտինք թափած եւ մեծ ներդրում կատարած հայերը, ասորիները եզդիները ստիպված են եղել արտագաղթել: «Նրանք մեծ տառապանքներ են կրել եւ հեռացել, սակայն համոզված եղեք, որ մենք այստեղ մնացողներս ենք կորցրել: Նրանց գնալուց հետո մենք աղքատացանք եւ կորցրեցինք մեր խաղաղությունը: Ներկայիս սերունդը առեւտրավել է պատմության հետ եւ դատապարտում է անցյալում տեղի ունեցած անխղճությունները»,-ասել է Օսման Բայդեմիրը: Նա հավելել է, որ KCK-ի գործով դատական գործում իր դեմ առկա մեղադրանքների պատճառով չի կարող երկրից դուրս գալ եւ մշակույթային կապեր հաստատել արտասահման հեռացած հայերի, ասորիների եւ եզդիների հետ: Աշխարհի ասորիների խորհրդի նախագահ Ջոնի Մետոն նշել է, թե Օսման Բայդեմիրի խոսքերն իրեն ոգևորել են, եւ նա այդ ուղերձները կհասցնի ասորական համայնքի ներկայացուցիչներին:

Շասարակական

ԱՆԱՆՑ ԵՎ ԱՆՁԻՆՁ ՄԻ ՀԵՏՔ

Ապրիլի 17-ին Կարեն Դեմիրճյանը կդառնար 80 տարեկան

Երբեւէ կգա՞ արդյոք այն պատմագիրը, այն բանասերը, որը պետական ու քաղաքական գործիչ Կարեն Դեմիրճյանի կերպարի ճշմարիտ նկարագիրը պիտի տա՝ նրա ժամանակի մեջ, նրա ժամանակի նկարագրին զուգահեռելով գործունեությունը մի անհատի, որի կենսագրությունը երկրի պատմության անջնջելի էջը մնաց: Եվ տարիներ, տասնամյակներ անց մեկ այլ սերունդ, որ Երեսնի մետրոպոլիտենի մուտքին կամ մարզահամերգային համալիրի ճակատին պիտի տեսնի այդ անուն-ազգանունը, առանց տարեց մեկին հարցնելու կկարողանա՞ այդ անվան հետ կապված որեւէ հիշարժան

բան մտաբերել: Կուզենայի, շատ կուզենայի, որ մտաբերեր: Մտաբերեր ու հետո նաեւ իր զավակներին պատմելու ցանկություն ունենար:



«Գրական թերթ»-ի հին համարներից մեկում գրող, դրամատուրգ Մանուկ Մնացականյանի՝ Արարատ քաղաքի ընդարձակման նախագիծ-պլանին առնչվող հոդվածը վերընթերցեցի: Շինարարության տակ էին դրվելու «Դեմիրճյան» անունը կրող խնձորի հարյուրավոր հեկտարներով այգիներ: Մնացականյանը գրողի հուզականությամբ մատնացույց էր անում Արարատ քաղաքը շրջապատող այլ՝ ամայի տարածքներ եւ աղաչելով պահանջում. «Գնացեք, այնտեղ ընդարձակեք ձեր քաղաքը եւ ձեռք մի տվեք «Դեմիրճյան» խնձորներին, ձեռք մի տվեք Դեմիրճյան անվանը»:

«Ձեռք մի տվեք Դեմիրճյան անվանը»: Կենդանի լինեք արժանահիշատակ Մանուկը, նույն վրդովմունքը պիտի ապրեք, երբ Դեմիրճյանի կերակրամանից տարիներով օգտված մի քանի վայ կոմունիստներ, մոռացած օձը տաքացնողի եւ կծողի մասին ժողովրդական իմաստուն խոսքը, 99-ի վերջերին վայնասուն բարձրացրին... Դեմիրճյանի դեմ: Ի՞նչ էր ուզածները, բան չհասկացանք:

Նման մարդկանց անմաքուր վարմունքի շուրջը խոսելու տեղ ու առիթներ շատ կլինեն: Դա իմ խնդիրը չէ: Այսօր՝ նրա ծննդյան օրը, ուզում եմ հիշել ու հիշեցնել 2002-ի ապրիլի 17-ին Դեմիրճյանի անունը կրող մարզահամերգային համալիրում նշված հոբելյանական միջոցառումը: Եթե մինչ այդ Դեմիրճյանի մասին մի ընդհանրական, մի ամփոփ, մի լիարժեք խոսք ասվել է, ապա դա Գագիկ Հարությունյանի այդ օրվա զեկուցումն էր: Լեփ-լեցուն դահլիճը 43 րոպե լսում էր վառ անհատականության, երկրի տարեգրության մեջ իր մնայուն էջը թողած, երկրի դիմանկարի վրա իր անջնջելի գույները բերած հայ մարդու իրական գնահատականը: Դա ոչ միայն հոբելյարի կատարած գործերի գնահատանքն էր, այլև Դեմիրճյանի՝ Հայաստանի ապագային միտված ծրագրերի շուրջը յուրովի խորհրդածություն, որ Դեմիրճյանի միջոցով ծրագրային դրույթներ էր առաջարկում հանդիսությանը ներկա պետական ու քաղաքական ամենաբարձր աստիճանի մարդկանց: Դա հիրավի ապագայի ծրագրի հանգամանակից մատուցումն էր Կարեն Դեմիրճյան-Գագիկ Հարությունյան զույգի կողմից: Նաեւ շեշտադրվեց շատ կարեւոր մի բան՝ իր հերոսին փնտրող ժողովրդի հավաքական կերպարի նկարագրության լիիրավ տեր

դարձած Կարեն Դեմիրճյանը երբեւէ դադար չի ունեցել անգամ այն ճամփաբաժանումին, որը, չգիտես ինչու, հեռացումի տարիներ են կոչում: Դա բաժանում չէր իր ժամանակից, եւ այդ հեռացում ասածը պարզապէս հորինվածք է: Մեծերը միշտ մնում են իրենց ժամանակի մեջ, նրանք ավելի ճիշտ են լսում իրենց ժամանակի թելադրանքը: Հոբելյանական այդ հանդիսությանը եւ, մանավանդ, հիմնական զեկուցմամբ ամեն ինչ տեղը դրվեց: Դեմիրճյան անհատը, Դեմիրճյան երեւոյթը ամբողջական ներկայացվեց նոր իրականության մեջ՝ մեր ազգին եւ անկախ պետականությանը ժամանակի նետած մարտահրավերներին դիմակայելու կովի եւ պայքարի մեջ իր հարուստ կենսափորձով, ուսանելի գործելաճով եւ ինքնատիպ պահվածքով: Դահլիճը քարացած լսեց 43-րտպետնոց այդ համապարփակ, այդ տարողունակ ելույթը եւ... հոտնկայս ծափահարեց: Շոկ էր ու սարսուռ՝ ո՞ւմ եւ ինչպէ՞ս կորցրինք: Այդ շոկն ու սարսուռը խտացավ, երբ բացվեց բեմի էկրանը, եւ սկսեց խոսել կենդանի Դեմիրճյանը. «...Ազգային ժողովը պետք է լինի մեր ժողովրդի կոլեկտիվ միտքը, կոլեկտիվ խորհրդարանը...»: Եվ շարունակությունը՝ «Խորհրդարանի ուժն ու հեղինակությունը պայմանավորված է ազատ եւ թափանցիկ ընտրություններով. միայն հանրության իրական կամքն արտահայտող լեգիտիմ խորհրդանը կարող է լուծել համազգային ծավալների եւ նշանակության խնդիրներ»: Խորհրդարանական ընտրությունների քարոզարշավի այս օրերին պատգամի պէս չէ՞ն հնչում, արդյոք, Դեմիրճյանի այս խոսքերը: Շա՛տ կուզենայի, որ քարոզարշավի այս օրերին ընտրողների հետ հանդիպողները, զանազան խոստումներ տվողները հաշվի առնեին սա:

Մեծերին չեն գնահատում նրանց գալ-գնալով, այլ միշտ նրա ներկան գգալով, հարկավոր պահին նրա Ոգու գործությանը դիմելով: Ժամանակի ու պայմանների փոփոխությունը, որպէս ավելորդ խառնուրդ, մեր վերաբերմունքի մեջ չպիտի կարողանա խամրել մեր հիշողության երանգները: Որովհետեւ մեծ ու փոքր, լավ ու վատ հիշողության խնդիր չկա՝ այստեղ միայն մարդուն հիշողությունից չվանելու խնդիրն է: Որովհետեւ Մեծերը մեզանից ու մեր ժամանակներից ինչ-որ չափով վեր են կանգնած: Նրանց շուրջը ներկայի ու գալիքի հանդէպ հավատի ներշնչման մթնոլորտ է, համատարած ու գերող մթնոլորտ: Նրանց այդ վստահության աղբյուրը անցյալի փորձն է, այդ փորձի հիման վրա ստեղծված հասարակական կարծիքն ու, անպայման, նաեւ անձից ճառագող հմայքը: Ղեկավար անձի հմայքը գեղեցկատեսությունն չէ, պատրանք չէ, այն առաջին հերթին հավատ է, վստահություն է: Հավատը դյուրըմբռնելի եւ խաբուսիկ է դառնում, երբ կերպարն ինքը եւ ստեղծում եւ նրա հատկանիշներն էլ հորինում եւ ցանկալին իրականի տեղ պատկերացնելով:

Կարեն Դեմիրճյանի պարագայում այլ էր. նա եկել էր հմա՛յքն էլ, հավա՛տն էլ իր գործելաճով պայմանավորած, եւ երբ կրկին վերադարձավ այլեւս

վստահություն ներշնչող Առաջնորդի ծիրանին ուսած եկավ: Եվ իրենից հետո, որպէս ուսյալ եւ անարգել անցնելիք ուղի, նա թողեց, Չարենցի բնորոշմամբ՝ «Անանց եւ անջինջ մի հետք»:

Այսպէս ասած «հեռացումի տարիներ»

Մենք նստած էինք «Հայլէկտրամեքենա» բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրենի իր աշխատասենյակում:

Դեմիրճյանը չասաց, թե այս անաշխատ, դժվարին տարիներին գործարանն աշխատում է, չավելացրեց, թե սա մեր բաժին երկինքն է, որ պահում ենք: Այդ գործարանի բանվորներն ու Դեմիրճյանն ինքը առանձին մի կեցվածք չէին ընդունում: Ցանկալին իրական տեսնելու պատրանքին նրանք մարմին էին տվել, եւ այդ ժամանակ երկրի երբեմնի ղեկավարի համար դույզն ինչ մտահոգիչ չէր այդ մասնակի միջավայրում գործելու հանգամանքը: Սա մեծերի բնույթն է. մեծերը նեղարտել չգիտեն՝ նրանք ամեն պարագայում ընդունակ են շարունակելու իրենց կյանքի գործը: Մեծ կամ փոքր գործի խնդիր չկա՝ իրենից չհեռանալու, իր բնույթը չփոխելու խնդիր է: Ումանք այն տարիները «հեռացումի տարիներ» կոչեցին՝ չպատկերացնելով, թե իր արժանապատիվ հեռացումով այն ժամանակ ինչ արյունահեղություն կանխեց Կարեն Դեմիրճյանը: Սա, անկասկած, այլ ուսումնասիրության թեմա է՝ անցյալն ընդհանրապէս ու անցյալի պետական գործչին մասնավորապէս գնահատելու եւ որպէս ուսուցյալ դաս ընդունելու իմաստով: «Ինձ համար այս տարիները նաեւ նոր պայմաններում ապրելու, աշխատելու, նոր փորձի ձեռքբերման, մի տեսակ ադապտացիայի ենթարկման տարիներ եղան. ես պետք է ազատվեի այն ինտրոյսից, որ իմ մեջ կրում էի որպէս մարդ, որպէս քաղաքացի, որպէս պետական գործիչ»:

Ազգի հերոսներն ամենաքիչը իրենց կյանքի մասին են մտածում՝ նրանց մտածումի հիմնական հենքը, ատաղձը, հիմնական ուշադրությունն այն գործն է, որին նվիրվել են: Ավելորդ մտահոգությունները հեռու վանելու միտումն էլ այն է, որ իրենց թիկունքից տագնապ չպիտի ունենան:

Բոլոր նրանք, ովքեր լավ ճանաչել ու լավ են ճանաչում Դեմիրճյան մարդուն, նոր չէ, որ պիտի համոզվեն, թե ճիշտ մարդու վրա ոչ ժամանակը, ոչ պայմաններն ու հանգամանքները, ոչ էլ, մանավանդ, կյանքի աստիճանի վեր ու վարը չեն կարող բացասական ազդեցություն թողնել: Դեմիրճյանը հրաշալիորեն տեսնում-զգում էր նորանկախ երկրի զարկերակը, նաեւ հույսեր էր կապում, թե այս նոր երկրի նոր ղեկավարությունը նորովի մի բան պիտի որ անի: Արվեց, թե չարվեց, այլ խնդիր է: Նաեւ այլ խնդիր է, որ եթե ինքը մտնէր (թող ներվի, որ այս համեմատությունն ենք անում), ասենք, միջին վազբուղի, արդյո՞ք իր տեմպը՝ վաստակի, փորձի, խորագիտության, ինտրոյսի պահպանած տեմպը, իր փեշը ձգող կամային արգելքների չէ՞ր հանդիպի՝ «մեր ասպարեզն է» անմիտ թելադրանքով: Մրանք ընդամենը իմ եւ Դեմիրճյանի գնահատողների մտավախությունն են, եւ իր երկրի

ճակատագրով մտահոգ մարդու մտորումն էլ «հիմա ի՞նչ պետք է անել» հարցի պատասխանն է՝ «Հիմա... Հիմա պետք է մտածել այս քանդված երկիրը վերաշինելու մասին, այս քայքայված տնտեսությունը կարգավորելու մասին՝ հենվելով անցյալի փորձի վրա, ամբիցիաներից ազատվելով, մարդկանց մեջ հավատ ամրապնդելով, վաղվա օրվա ուրվագիծը միշտ տեսնելով եւ դրան ձեռք կերպարանք տալով»:

Գյումրին եւ Դեմիրձյանը
«Կատախեի՛ն Դեմիրձյանին, ո՛նց կկառուցեր անտեր ու դուրս մնացած մեր այս քաղաքը...»:
Տարօրինակ թվաց այս վերնագիրը, ինչո՞ւ հատկապես Գյումրիի հետ եմ զուգահեռում արդեն ոչ Կենտրոնի առաջին քարտուղար Կարեն Դեմիրձյանի մտորումները: Իմ բոլոր հանդիպումներում (դրանք շատ են եղել, ու ես Դեմիրձյանի կողմից կեսկատակ-կեսլուրջ համարվել եմ աներես լրագրող) միշտ էլ արծարծվել է Գյումրվա թեման: Դա իմ սիրելի քաղաքն է, երկրաշարժից հետո նրա դժվարությունները՝ իմ տխրությունը, իսկ Դեմիրձյանի համար այդ քաղաքը շատ ավելին էր, քան պարզապես սիրելի քաղաք: Գյումրին Դեմիրձյանի ափսոսանքն էր, նրա ցավը, նրա անգոր անհանգստությունը:

- Գուցե պետք էր, որ Դուք ներկա իշխանություններին առաջարկեի՞ք Ձեր մասնակցությունը Գյումրիի վերականգնմանը:

Այս հարցը բազմիցս տրվել է, եւ ամեն անգամ ցավի արձագանք է եղել, ափսոսանքի արտահայտություն, նորից ու նորից ուշացած մի խոստովանություն, թե՛ «Երեւի դա պետք էր անել»: Եվ նորից ու նորից բացատրության պես մի բան, որ ոչ այնքան զրուցակցին էր ասվում, որքան իր ներքին մտորումի բարձրաձայնումն էր.

- Կարծում եմ նպատակահարմար կլիներ ապագա քաղաքը կառուցվող հողերի վրա փայտաշեն ժամանակավոր տնակներ պատրաստվելին, քաղաքն ազատվեր բնակիչներից, մաքրվեր բուն քաղաքն ու կառուցվեր իր նախկին ճարտարապետական տեսքին համահունչ: Հետո աստիճանաբար բնակիչներին տեղափոխել քաղաք եւ ազատել այն հողերը, որոնց վրա ժամանակավոր փայտե տնակներն էին: Այս սակավահող երկրում կպահպանվեին շրջակա գյուղերի հողերը, ազատված քաղաքում էլ ավելի դյուրին կընթանար կառուցապատումը: Եվ ամենակարեւորը՝ սեփական տները կառուցելու հնարավորություն կտրվեր մարդկանց՝ օգնելով վարկերով, շինանյութերով: Այդ պայմաններում քաղաքը լքել ցանկացողների քանակը կհասներ նվազագույնի:

Այսպես, պարզ ու որոշակի, նաեւ ամենօրյա ափսոսանք: Հետագայում, երբ ԽՍՀՄ-ի փլուզումը Գյումրիից տարավ միութենական հանրապետությունների շինարարներին, եւ քաղաքը մենակ մնաց իր հոգսերի հետ, նրա այդ ափսոսանքն ավելի խորացավ: Գուցե այս քաղաքը պիտի լիներ այն հրաշալի առիթը, որ պայմանավորեր առաջնորդի հետդարձը, գուցե հենց այնտեղ էր պետք

մարդկանց կորացած մեջքը շտկելու նեցուկը՝ իշխանությունների բարի հայացքը շրջելու դեպի աղետյալ քաղաք, հոգու երկրաշարժի առաջն առնելու, եթե ավելի մանրամասնենք, ապա նաեւ՝ հեռացող շինարարների կողմից թողածի (շինանյութեր, օժանդակ կառույցներ եւ այլն) ահավոր թալանը կանխելու:

Սա մի թեմա է, որ Կարեն Դեմիրձյան անհատի մասին երբեւէ գրողների համար միշտ արծարծվելու կարոտ պիտի ունենա, քանզի ժողովրդի մեջ հավատի եւ հույսի թելերը ամուր կապված էին իրենց նախորդ առաջնորդի հետ: Եվ պատեհ առիթ է, որ ես հիշեմ այս նյութի բնաբան տողերի հեղինակ, մասնագիտությամբ բժիշկ Ֆելիքս Գրիգորյանին, ում տարբեր առիթներով Գյումրիում հանդիպել եմ, ու նա մեր զրույցները միշտ թեքել է դեպի Դեմիրձյանը. «Գյումրեցիները սպասում էին, որ Դեմիրձյանն այն օրերին կգա մեր քաղաք, մեր այդ ցանկությունն առավել գունեղ դարձավ շինարարների հեռանալուց հետո»:

Հեռու եմ առաջնորդների միջեւ զուգահեռումներ անելու միտումից, սակայն պատմությունն ինքն է խրատում, որ անցյալը (այս պարագայում անցյալի կարող ուժերին ու հեղինակություններին) կտրուկ վանելը երբեւէ չի խրախուսվել: Սա՛ մեղմ ասած: Անկախության գաղափարի հորձանքով իշխանության եկած ուժերն այն ժամանակ հանդիմանության առիթներ, կարծում եմ, չէին տալիս՝ պատերազմն էր շարունակվում, շրջափակումն էր սեղմում, տնտեսական արտաքին կապերն էին խզվել: Խոսքը մարդկային գործոնի, ընդունված կարգով ասած՝ կադրերին ճիշտ ու սխալ ընտրելու, նրանց վստահել-չվստահելու մասին է: Այդ ամենը դեռ բավարար չէր, կոմունիստների մի նեղ շրջանակ էլ՝ իրենց նեղ, անձնական ամբիցիաների ձեռքը կրակն ընկած, քաղաքական մի անհիմն արշավ սկսեցին իրենց նախկին առաջնորդի դեմ...

Այսօր, սակայն, մի պահ հեռանանք այս ամենից ու հիշատակի խնկարկումի խոսքեր պահենք Կարեն Դեմիրձյանի համար՝ այսօր նրա ծննդյան օրն է:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՊԱՊԻԿՅԱՆ



Հ Ա Յ Ո Ց ՑԵՐԱՄՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ԳԱՄՊԱՆ ՏԵՐՏԵՐԵԱՆ

(Հատված)

ԵՐԿՐԻ ԽՈՍՔ

Այս տարի կնշվի մարդկության պատմությանը նրբևէ հայտնի ամենահրեշտավոր իրադարձություններից մեկի՝ Հայոց ցեղասպանության 97-ամյակը: Ողջ հայությունը, կողքին ունենալով արդարամիտ և առաջադեմ մարդկությանը, կշարունակի պայքարը Հայ Դատի միջազգային ճանաչման ուղղությամբ:

Հայերիս համար այս տարին պետք է կարևորվի նաև մեր պատմության ամենաողբերգական էջի գնահատման և վերաբժնվորման առումներով: Մենք անընդհատ մեր ուղեղներում պետք է ունենանք մի հարցադրում. ինչպե՞ս

պատահեց, որ հզոր պետություններ և աշխարհա-կայություններ ստեղծված, համաշխարհային քաղաքա-կրթությունը բազմաթիվ մեծ արժեքներ տված հայ թուրքացի այնքան, որ իր իսկ հողում գեղասպանության ենթարկվեց մարդկությանը որևէ մեծ արժեք չտված թուրքական պետության կողմից... Ինչպե՞ս դա կատարվեց, ի՞նչ հայտնի ու գաղտնի ուժեր մասնակցություն ունեցան այդ սև գործում...

Ներկայացվող ժողովածուն մի փորձ է դիտարկելու հայոց գեղասպանությանը գաղտնի մասնակցություն ունեցած նրկու ուժերի՝ սիոնիզմի (հրեական ազգայնամոլության) և մատնականության (Ազատ որմնադրության) դերակատարումը: Դրանով, իհարկե, ամենաչնչին չափով իսկ կասկածի տակ չի դրվում թուրքական պետության պատասխանատվությունը: Սա կարևոր է մեզ համար, որպեսզի չկրկնենք անցյալի սխալներն այսօր: Ինչո՞ւ էին սիոնիստական ուժերը ուղղակի ու անուղղակի կերպով նպաստում հայերի գեղասպանությանը: Այդ հարցադրումն այսօր առավել քան արդիական է, եթե նկատի ունենանք, որ վերջին տարիների ընթացքում բազմաթիվ ատյաններում հայոց գեղասպանության ճանաչման հարցը ձայնողվել է հրեական լոբբինգի արդյունքում (թեման մեզանում շատերը մեր ժողովրդին հատուկ արդարամտությամբ և միամտությամբ կարծում են, թե հրեաները, որպես գեղասպանության ենթակված բախտակից ժողովուրդ, պետք է նպաստեն հայ Դատի լուծմանը)... Ինչո՞ւ «արդարություն, ներայություն, հավասարություն» դավանող մատնականությունը, որն իր շարքերում ունի (և այսօր էլ ունի) բազմաթիվ հայ «ներայներ», չկանխեց մշակութաստեղծ ու աշխատասեր մի ժողովրդի ոչնչացումը, այլ ընդհակառակը նպաստեց իր որոշ ուժերով...

Պատահական չէ, որ մերօրյա հայ մատնները (որոնք կրկին մեր ժողովրդին բնորոշ միամտությամբ կարծում են, թե կարելի է մատնականության ուժերն օգտագործել հայկական խնդիրներ լուծելիս) նույնպես բարձրացնում են հայոց գեղասպանության մեջ մատնականության դերի գնահատման հարցը: Բերենք միայն մեկ օրինակ: Հայ մատնների «Արմեն» թիվ 28 օթյակի հրատարակած մատնաշարի Ե գրքուկում կարդում ենք. «Ե վերջապես Ազատ Որմնադրութեան պատմութեան մեջ տակաւին անպատիժ մնացած աննախընթաց տարրործեանք մը ոճիրի արձանագրութիւնը բաց կմնայ մեզի համար: Կարելի չէ ուրանալ, թե Ազատ Որմնադիրներն էին Հայկական գեղասպանութեան հեղինակները» («Ուղեգիր դեպի մատնություն», Պեյրոթ, 1995, էջ 52)...

Ստորև բերվող նյութը առաջին անգամ տպագրվել է «Սիոնիզմի նւ Պանթորքիզմի Առնչութիւնները Եւ Անոնց Սպառնալիքը Հայաստանի լինելութեան» գրքուկի, որը լույս է տեսել Բեյրութում, 1991թ.: Հեղինակն աշխատասիրությունը հանրությանը ներկայացրել է 1990թ. նոյեմբերի 18-ին, «Լիբանանահայ գրական շրջանակում» կայացած դասախոսության ժամանակ: Աշխատասիրության արաբերեն տարբերակը լույս է տեսել «Սիոնիզմը, պանթորքիզմը և Ղարաբաղի հարցը» նյութերի ժողովածուում՝ «Սիոնիզմի և պանթորքիզմի առնչությունները» վերնագրով («Բիսան» հրատարակչություն, Բեյրութ, 2002)

Նյութը ընթերցողին առավել մատչելի դարձնելու համար, ուսումնասիրության առաջին երկու գլուխները վերահրատարակվում են լեզվական փոփոխություններով, արևմտահայերենից ու դասական ուղղագրությունից վերափոխելով արևելահայերենի ու արևելյանական ուղղագրության: Կատարվել են նաև խմբագրական բնույթի չնչին փոփոխություններ և սրբագրումներ:

Հեղինակը Գասպար Տերտերյանն է՝ սփյուռքում, մասնավորաբար Լիբանանում և Սիրիայում հանրաճանաչ փաստաբան, հրատարակախոս ու հասարակական գործիչ: Նա հայ իրականության մեջ սիոնիզմի և պանթորքիզմի գաղափարախոսությունների ու նրանց սերտ կապերի լավագույն գիտակներից է: Գ. Տերտերյանը վերջին տարիներին ղեկավարում է «Լիբանանահայ գրական շրջանակ»

կազմակերպությունը, շարունակելով հանդես գալ բազմաթիվ հրատարակումներով ու դասախոսություններով՝ նվիրված հայությանն սպառնացող մահացու վտանգներին, որոնց մեծագույն մասը պայմանավորված է սիոնիզմի և պանթորքիզմի ակտիվությամբ:

Մեր դիմումին ի պատասխան, հարգարժան և խիզախ մտավորականը ո՛չ միայն իր ամբողջական համաձայնությունը հայտնեց իր ուսումնասիրության վերահրատարակմանը, այլ և ջերմորեն ողջունեց նման նախաձեռնությունը, հույս հայտնելով, որ սույն ժողովածուն կնպաստի հայրենասիրության մտքի հորիզոնի ընդլայնմանն ու իրեն սպառնացող վտանգների գիտակցության մակարդակի բարձրացմանը:

ՈՎՔԵՐ ԵՒ Ն ՊԱՆԹՈՒՔԻԶՄԻ ՀՆԻՆԱԿՆԵՐԸ

Պատմագիտական բազում հետազոտություններ գալիս են անհերքելի կերպով փաստելու, որ Պանթորանիզմի և Պանթորքիզմի քարոզչությունը առաջին անգամ հղացողները եղել են հունգարացի, ավստրիացի, լեհ, ֆրանսիացի և գերմանացի հրեասիոնիստներ, որոնք այս վարդապետությունը հիմնադրող իրենց գործերը գրել են 19րդ դարու վերջին քառորդի ընթացքում: Իսկ այս վարդապետության մասին գրած շատ փոքրաթիվ, թուրքացեղ հեղինակները գրել են հետևողաբար իրենց հրեասիոնիստ առաջնորդների, սկսած 20րդ դարու առաջին քառորդի վերջերից: Այսինքն, թուրքացեղ փոքրաթիվ քարոզիչները կես դարով ետ են մնացել հրեասիոնիստ հիմնադիրներից: Այս մասին վավերական աղբյուրներ են Մեծ Բրիտանիայի հետախուզական սպասարկությունների գաղտնի տեղեկագրերը, որոնք աներկբայորեն հաստատում են, թե Պանթորանիզմը և Պանթորքիզմը օտար, ոչթուրքական հղացում է և հետապնդում է օտար, ոչթուրքական նպատակներ՝ ռազմավարական ու ծավալողական նպատակներ: Ճանաչված պատմաբան Իլիոթ Կրինել Միլիս արդի Թուրքիային նվիրված իր երկասիրության մեջ մեջբերում է Մեծ Բրիտանիայի Հետախուզական գրասենյակի՝ Պանթորանիզմի մասին գաղտնի տեղեկագրի հետևյալ հատվածը. «Իր ծագումով՝ Պանթորանիզմը (ա) արհեստական է և բ) Եվրոպական օսմանցիներն այն չարտաբերեցին պարսկական գրականությունից՝ իրենք իրենք համար... Այն իրենց ՏՐՎԱՄԵ Ե Եվրոպայի կողմից. նրանք դարպասողներ չէին, այլ՝ ԴԱՐՊԱՍՎՈՂՆԵՐԸ...»: Այսինքն՝ Օսմանցի թուրքերը ո՛չ հեղինակներն էին և ո՛չ իսկ հարցը հետապնդողները, այլ՝ իբրև գործիք և միջոց օգտագործվողներ պարզապես:

Պանթորանիզմի հետապնդած ոչթուրքական նպատակների բացատրությունը տվել են անգլիացի ակնաակոր պատմաբաններ Կլիվլուտը և Թոմսոնը իրենց «Թուրքիա» խորագրված ծավալուն երկասիրության մեջ, ուր շեշտվում է թուրանական քարոզչության հետապնդած հակառուսական և հակախորհրդային ծավալողական նպատակը Արևմուտքի կողմից, քանի որ Թուրքիա առանձինն անգոր է նման ռազմավարություն կիրառելու: Նրանք գրում են. «Թուրանական քարոզչության նշանակությունը մենք կարող ենք հասկանալ, եթե հիշելու լինենք, որ թուրքերեն խոսող մարդկանց ընդհանուր քանակի երկու երրորդը բնակվում է Ռուսաստանի սահմաններից ներս, և կարծեք Թուրանական շարժման հետապնդած բուն նպատակը Ռուսաստանի տկարացումն է»:

Հետևաբար, եզրակացնում ենք, որ Թուրանականությունը «թուրք» ազգայնական մի շարժում չէր երբևք, այլ՝ հակառուսական ծավալողական մի ծրագրի քաղաքական հիմնավորումը, որին կարող է օգտագործել

նման միտումներ որոճացող և շահագրգռված որևէ մեծ ուժ կամ տերություն:...

Պատմական փաստերը ցույց են տալիս, որ այդպիսի միտումներով առաջինը շահագրգռված են եղել համաշխարհային Միոնիզմի ֆինանսիստները, որոնք հովանավորել են այս քարոզչությունը:

1873- 1874թվականներին Լոնդոնում լույս են տեսել հրեաստիոնիստ Արմինիոս Վամպերի գրքերը՝ «Քոլսարա» և «Լենտրոնական Ասիա», որոնցում գովերգվում են թուրք ցեղի գերակայությունն ու ... հի-ն փառքը:

1877թ. Լայպցիկում լույս է տեսել ավստրիացի հրեաստիոնիստ Ֆրանց ֆոն Վերների գիրքը՝ Մուրադ էֆենդի կեղծանունով, ուր քարոզվում էր թուրք ցեղի վերածննդի անխուսափելիությունը և ուրվագծվում Պանթուրանիզմի քաղաքական մեծ ծրագիրը...

1889թ. Փարիզում լույս է տեսել լեհ հրեաստիոնիստ Կոնստանտի Բոռնցկոյի գիրքը՝ «Հին և արդի թուրքերը» խորագրով, Մուստաֆա Ջելալեդինի փաշա կեղծանունով, որտեղ թրքության համագոյն հազած այս հրեաստիոնիստը «հի-ն» թուրքերու առնականությունն ու ցեղային գերակայությունը իդեալականացնելով, ողբում է «արդի» թուրքերի քայքայումը, գրգռելով նրանց ցեղային փառասիրությունը և նրանց ցույց տալով առասպելական Թուրանի անձայրածիր կայսրությունը վերակազմելու ճամբան...

1896թ. դարձյալ Փարիզում լույս տեսավ ֆրանսիացի հրեաստիոնիստ Լեոն Կահունի գիրքը՝ «Ասիայի պատմության ներածություն. Թուրքերն ու մոնղոլները իրենց ծագումից մինչև 1405 թվականը», որտեղ այս հրեաստիոնիստը լորձնաշուրթն փառքն է հյուսում Ջենգիզ խանի և Լենկթիմուրի, որոնք իբր կերտել են «թուրանական» հի-ն կայսրության փառքը, սակայն, իսլամն ընդունելուց հետո, նրանք քայքայվել են ու հետադիմել... Հստակ է, թե Լեոն Կահունի այս գործը բացարձակ աղերս չունի պատմագիտության հետ. դա շահագրգռ մի պատմաշինարարություն է կամ մի առասպելապատում, որը բացառապես հետապնդում է Օսմանյան թուրքերի մոտ ռասայական զգացումներ արթնացնելու և դեպի Լենտրոնական Ասիա, ընդհուպ մինչև Չինաստան ծավալողապաշտական այսրոժակներ գրգռելու նպատակը... Հրեաստիոնիստ այս ամբողջավարը նկատի չի առել նույնիսկ 1718թ դարերի Օսմանյան թուրք ճանապարհորդների կարծիքը Լենկթիմուրի մասին: Օրինակ՝ 17-րդ դարի Օսմանյան թուրք ճանապարհորդ Էվլիա Չելեբին իր ծանոթ «Ուղեգրության» մեջ Լենկթիմուրին ներկայացնում է որպես ՕՏԱՐ ԲՈՆԱԿԱԼ և դահիճ, որպես զովնի խավարամիտ տիրակալ ...

Գերմանահպատակ հրեաստիոնիստ Ալբերտ Կոհենն է սակայն ամենից վավերական և արտադրողական տեսաբանքարոզիչը Պանթուրքիզմի և Պանթուրանիզմի քաղաքականավարողական ծրագրի: Ալբերտ Կոհենը, Թերին Ալփ կեղծանունով գրել է բազմաթիվ գրքեր գերմաներեն լեզվով, որոնք կարծեք հասցեագրվել էին ոչ միայն Օսմանյան թուրք գործիչներին ու մտավորականներին, այլև՝ գերման պետական մարդկանց, զինվորականների և գործարարների, որոնց ցույց էր տալիս իմպերիալիստական հանգրվանին հասած Գերմանիայի՝ դեպի Արևելք տարածվելու քաղաքական ծրագրի գաղափարախոսական հիմքը: Այսպես, թուրքական Թերին Ալփ կեղծանունով ծագված հրեաստիոնիստ Ալբերտ Կոհենը գերմաներեն և թուրքերեն լեզուներով հրատարակեց ծրագրային գրքերի ամբողջ մի շարք, որոնցից այստեղ հիշատակում ենք երեքին.

1.Թուրքականություն և համաթուրքականություն», ուր տեսական հիմնավորումն է տալիս Պանթուրքիզմի վարդապետության:

2.Մտորումներ Մեծ Թուրքիայի բնույթի և ծրագրի շուրջ», ուր աշխարհակալական այս ծրագիրը բնութագրում է և սահմանում, գատորոշելով Պանթուրանիզմը

Պանթուրքիզմից:

3-Պատերազմից դեպի խաղաղություն անցման տնտեսության մասին» թուրքերեն ուսումնասիրությունը, որի հեռակա նպատակն է Առաջին աշխարհամարտից հետո Օսմանյան Թուրքիայի տնտեսությունը ենթարկել սիոնական կապիտալին, քանի որ նրանից արմատախիլ էին լինելու նախապատերազմյան հունական, հայկական և արաբական կապիտալները... Այստեղ հարկ է նշել, որ սիոնիստ Ջավիդի էր վստահված Թուրքիան սիոնական կապիտալի տիրապետության (իմա՝ ֆինանսական կապիտալիզմի համաշխարհային օլիգարխիային, որ հիմնովին հրեա ֆինանսիստների ձեռքում է գտնվում) ենթարկելու առաքելությունը, նախ որպես «Իթթիհադ վե Թերաքքի» (»Միություն և առաջադիմություն«) ֆինանսական պատասխանատու, և ապա որպես քննալական Թուրքիայի ֆինանսների նախարար ...

Պանթուրքիզմի վարդապետության հիմնադիրքարոզիչ հրեաստիոնիստների շարքում չպետք է մոռանալ նաև Խալիդ Էդիբ անունով ծագված հրեա գրագիտուհին, որ 1916թ. Վայմար քաղաքում հրատարակել է գերմաներեն լեզվով իր՝ մեծ աղմուկ հանած գիրքը՝ »Նոր Թուրան«, և պատրաստվում էր մեծ դերակատարություն ունենալ հետպատերազմյան Թուրքիայում՝ քննալական իշխանության օրոք: Նա դեռևս երիտթուրքերի իշխանության օրով Դամասկոսի աղջկանց դպրոցների քննիչի պաշտոնն էր վարում և պանթուրքիստական լայն քարոզչությամբ փորձում թուրքացնել արաբ նորահաս սերունդը, խափանելու համար արաբական անկախության քարոզչությունը: Նա հաջողացրել էր իր համար կորզել »Միլլեթ անասը« (»Ազգի մայրը«) տիտղոսը, կարծեք զուգակշռելու համար Մուստաֆա Քեմալին հետագայում տրվելիք »Աթաթուրք« (»Թուրքերի հայր«) տիտղոսը: Խալիդ Էդիբ և Ջավիդ, յուրաքանչյուրն իր ճամբով, տենդագին աշխատեցին համոզել Մուստաֆա Քեմալին, որպեսզի վերջինս հուշեր ամերիկյան զինվորական (Հարթորդի) պատվիրակության՝ իր պատրաստակամությունը ընդունելու ամերիկյան մանդատը Օսմանյան կայսրության ամբողջ մնացորդացի վրա ... խանգարելու համար ամերիկյան մանդատը Հայաստանի համար... Նույն սիոնական կազմակերպությունն էր, որ ԱՄՆ Սենատում 1920թ. հունիսի 1-ի քվեարկության ընթացքում վիճեցրեց ամերիկյան հոգատարության ծրագիրը Հայաստանի վրա: ԱՄՆում իրենց առավել հզոր զգացող սիոնիստները ցանկանում էին ամերիկյան հովանավորության տակ առնել ամբողջ տարածաշրջանը, ուր պիտի կարողանային ազատահամարձակ խաղալ...


Պանթուրքիզմի քարոզչության մեջ այս հրեաստիոնիստ հսկաների կողքին գաճաճներ են միան սիոնիստների թուրքացեղ սանիկները: Այս գաճաճների շարքից ամենից հեղինակավոր դեմքը հանդիսացավ Ջիա Գյոքալփ անունով գրող Դիարբեքիից՝ իր «Թուրքշյուլյուգյուն էսասլարը» («Թուրքականության հիմունքները») գրքով, հրատարակված 1923թ., Էնգյուրիում (Անկարա):

Հստակ է ուրեմն, որ Պանթուրքիզմի և Պանթուրանիզմի հիմնադիրները բացառապես սիոնիստներն էին, որոնք այն հեղինակեցին և քարոզեցին ամբողջ կեն դար (1873-1923), մինչև սկսեց կերպարանք ստանալ արդի կամ քննալական Թուրքիան, և ապա միայն հրատարակել ավառաշին թուրք պանթուրքիստ տեսաբանը Ջիա Գյոքալփ անունով, որ,

հրականության մեջ, աշակերտն էր հրեաստիոնիստ հիմնադիրքարոզիչների՝ Վամպերիի, Ֆրանց ֆոն Վերների, Բոթենցկու, Կահունի, Կոհենի և Խալիդն Էդիբի...
Նետաբար, Սիոնիզմի և Պանթոփթիզմի միջև կապը ստակական առնչակցություն չէ, այլ հոգեգավակի և ծնողի միջև էական հարաբերակցություն:

Մշակույթ

Թորոնթոն Առաջինը է որ կը նշէ Հայ Գրքի Տպագրութեան 500ամեակը



Արդարև, Թորոնթոն առաջին քաղաքն է որ հինգօրեայ ցուցադրութեամբ և յատուկ ծրագիրներով նշեց Հայ գրքի տպագրութեան **500**ամեակը: Միացեալ Ազգերը հռչակած է Երևանը որպէս **2012**ի Աշխարհի Գրքի Մայրաքաղաք:

Սոյն ձեռնարկները գործադրուեցան հայրենիքէն բերուած հնատիպ գիրքերու ցուցադրութեամբ, Երևանէն յատկապէս հրաւիրուած բանասերներու դասախօսութիւններով և համայնքային մասնակցութեամբ, Հինգշաբթի Դեկտեմբեր **8**էն մինչև Երկուշաբթի Դեկտեմբեր **12, 2011**, Հայ Կեդրոնի Համազգայինի Յ. Մանուկեան գրադարանը:

Թորոնթոյի Հայ եկեղեցիները և Հայ մշակոյթային միութիւնները հովանաւորած և կազմակերպած էին այս յատուկ միջոցառումները, ինչպէս Սբ. Երրորդութիւն, Սբ. Աստուածածին և Հայ Աւետարանական Եկեղեցիները, ինչպէս նաև Հ.Բ.Ը.Ս.ը, Համազգայինը և Թորոնթոսի Ակումբը: Սոյն կազմակերպութիւններուն աջակցեցան Սբ.Վարդան (Միսիստկա) և Սբ. Գրիգոր եկեղեցիները, նաև Միսիստկեան Սանուց և Հայ Ուսանողական Միութիւնները: Այս միջոցառումին համդրողը էր Հայագիտական Համազգային Կենտրոնի ներկայացուցիչ, Դոկտ. Էտիկ Պաղտասարեանը:

Ցուցադրութեան համար բանասերներ, Պարոններ Գեորգ Ներսէսեանն Ռաֆֆիկ Ղազարեան, հետերնին հայրենիքէն բերին **62** հնատիպ գիրքեր: Որոնց կողքին նաև ցուցադրուեցան Աւետարանական եկեղեցիի Լ. Ֆերմանեան գրադարանէն գիրքեր և թերթեր, առաւել, ազգայիններ իրենց անձնական

հաւաքածոներէն փոխ տուին ուրիշ գիրքեր: Ընդհանուր ցուցադրուած գիրքերու թիւը հասաւ **100**ի:



Բացման յայտագիրը տեղի ունեցաւ Սբ. Աստուածածին եկեղեցիին մէջ: Օրուայ հանդիսավարն էր Տիկիյն Քարոյին Խուշապէ: Ներկայ էին աւելի քան **300** ազգայիններ: Ընթերցուեցաւ Հայ եկեղեցական առաջնորդներու , Սփիւքի և Մշակոյթի Նախարարներու ուղերձները: Քաղաքիս երկու ամենօրեայ վարժարանները մասնակցեցան արտասանութիւններով, Հ.Օ.Մ.ի վարժարանի **7**րդ կարգի աշակերտները խմբային արտասանութեամբ ներկայացուցին Վահան Թեքէյեանի ,Տաղ Հայերէն Լեզուիէ, իսկ Հ.Բ.Ը.Ս. Ծառուկեան Վարժարանի **5**րդ կարգէն աշակերտներ արտասանեցին Դանիէլ Վարուժանի ,Ձօնը: Բանասեր, Գեորգ Ներսէսեան, Հայագիտական Համազգային Կենտրոնի տնօրէն, բացատրեց Կենտրոնի առաքելութիւնը, որն է հանել հնատիպ գիրքերու պատճէնը (**scan**) և ապա ամփոփել խտասալիկի (**DVD**) վրայ որ պահպանուի Հայ գրքի մատուցները: Նաև ստեղծել հայ գրքի յատուկ զարդարուեստը ներկայացնող գրադարան որ կարելիութիւնը տայ ուսումնասիրութիւններ կատարելու և լոյս ընծայել ,Զարդարուեստը Հայ Տպագիր Գրքումէ մատենաշարը: Իսկ բանասեր, Ռաֆֆիկ Ղազարեան, Ազգային Գրադարանի փոխ տնօրէնը, փոխանցեց կարևոր տեղեկութիւններ Ազգային Գրադարանի մասին իր հիմնուելէն ի վեր **1919**էն մինչև օրս: Այժմ ան ամենահարուստ գրադարանը է և ունի աւելի քան **7** միլիոն գիրքեր: Նաև կոչ ուղղեց բոլոր սփիւքի գրադարաններուն որ իրենց գիրքերու ցանկը ուղարկեն որպէսզի Հայ գրքի լման հարստութեան պատկերը ունենալ և այսպէսով կազմել ամբողջական Հայ գրքի մատենագրութիւնը: Յայտագրին մասնակցեցան Սբ. Երրորդութեան հովիւը Տէր Զարեհ Աւագ Քին, Զարգարեանը, իր բացման խօսքով, Հայ Աւետարանական Համաշխարհային Խորհուրդի տնօրէն՝ Վերապատուելի Վահան Թութիկեանը իր ուղերձով և Սբ. Աստուածածին Եկեղեցւոյ կողմէ, Հայր Գեղարդ Վրդ. Գիւսպէեան, իր փակման խօսքով: Երեք հոգևիրականներն ալ տուին անհատական

վկայություններ Հայ գրքի զօրութեան, կարևորութեան և ապագային մասին: Ապա ներկաները ուղղուեցան Հայ Կեդրոն, Համազգայինի Յ. Մանուկեան Գրադարանը, ուր յատուկ և ապահով ցուցափեղկերու մէջ գետեղուած էին **100** գիրքերը: Գինիի, պանիի, պտուղներու հիւրասիրութեան հետ այցելուները ուշի ուշով ուսումնասիրեցին և նոր գիտելիքներ ամբարեցին: Ինչպէս հնատիպ են այն գիրքերը որ հրատարակուած են **1512**էն մինչև **1800**, իսկ առաջին գիրքը տպուած է **1512**ին, Վենետիկ Յակոբ Մեղապարտի .Ուրաթագիրքն է: Յուցադրուած գիրքերը ընդհանրապէս տպուած էին Վենետիկ և Պոլիս: Նաև ունեցած ենք գիրքեր որ տպուած են Եւրոպական զանազան քաղաքներ, Պարսկաստան, Հնդկաստան և Եգիպտոս: Այլ խօսքով ուր որ հայը կանգ առած է, տպած է իր աղօթագիրքը և ատետարանը: Հայերս **8**րդ ազգն ենք որ տպագրութիւն ունեցած ենք: Սուրբ գիրքերու կողքին նաև հրատարակուած են բառարաններ, գիտական և փիլիսոփայական գիրքեր: Տեսահոլովակներ ցոյց տրուեցան և բացատրական թղթիկներ բաժնուեցան: Կար նաև **2012**ի որակաւոր օրացոյց, իրաքանչիւր ամիս հնատիպ գիրքերու գեղեցիկ էջերէն վերատպուած:



Հինգ օրերու ընթացքին ցուցահանդէսը այցելեցին Գանատական գրադարաններու պատասխանատուներ, Հայ աշակերտներ, պատանիներ, գրքի տպագրութեամբ հետաքրքրուողներ և վերջապէս Հայ գրքի հետևորդներ: Հարիւրաւոր այցելուները անդրադարձան որ հակառակ Հայ գիրքը, իր ժողովուրդի պատմութեան նման, դարերու ընթացքին, գողցուած, թալանուած և այրուած է, ինչ որ մնացած է, խիստ արժեքաւոր և անփոխարինելի է: Կարիքը կայ պահպանելու, հոգալու, տէր ըլլալու և ուսամնասիրելու: Օրինակելի է որ Հայ Գրքի մասունքներու արժեքը փոխանցելու համար քաղաքիս Հայ եկեղեցիները և մշակոյթային միութիւնները համախմբուած այս միջոցառումները գործադրեցին հեզասահ կերպով: Թորոնթոնիայի տարեդարձ մը նշել ընդառաջ կերպով:

Արշօ Զաքարեան
Դեկտ. 21, 2011

Շայերեն տպագրութեան 500ամյակ (15122012)

Համարդեց՝
Դոկտոր Էր. Բաղդասարյանը

Շարունակությունը համար 168ից

18011920ին Վենետիկի Միխայրայան տպարանում լույս է ընծայվել հայ մատենագիրների երկեր, հայագիտական աշխատություններ՝ «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» երկհատոր բառարանը (183637), Գ. Ավետիքյանի, Մ. Ավգերյանի, Ա.Բագրատանու, Ղ.Ալիշանի, Գ. Զարբխանյանի եւ այլոց աշխատություններն ու գեղարեստական երկերը, անտիկ հեղինակների, արեւմտաեվրոպական դասականների թարգմանական գործեր, գիտության տարբեր բնագավառների վերաբերյալ գրքեր, մի շարք պարբերականներ: Մոտ 200 տարի է, ինչ այդ տպարանը գործում է անընդմեջ: 1811ին Տրիեստից Վիեննա տեղափոխված Միխայրայանների երկրորդ միաբանությունը շարունակել է իր տպագրական գործունեությունը, լույս է ընծայել հարյուրավոր հայերեն գրքեր և մի քանի պարբերականներ, այդ թվում՝ «Հանդես ամսօրյա» հայագիտական ամսագիրը (1887ից): 1833ից հայկական տպագրություն կա Երուսաղեմում:

15121920ին տպագրվել է մոտ 15 ոգ. անուն հայերեն գիրք է 2000 անուն պարբերականներ:

Հայաստանում, 1918ից սկսած, աստիճանաբար հայկական տպագրության գլխավոր կենտրոն է դարձել Երևանը: 1921ին այստեղ կազմակերպվել է Պետական հրատարակչություն (Պետհրատ), որը լույս է ընծայել քաղաքական, գեղարվեստական, մանկական, գիտական հազարավոր գրքեր: Այժմ Երևանում գործում են «Լույս», «Հայաստան», «Նաիրի», «Արեւիկ», «Փյունիկ», «Նոր դպրոց», «Շաղիկ», «Անահիտ», Հայկական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն և մասնագիտացված ու մասնավոր մի շարք այլ հրատարակչություններ: Հրատարակչական գործը տնօրինում է ՀՀ կառավարությանն առընթեր տեղեկատվության եւ գրահրատարակչության վարչությունը: 192093ին Հայաստանում տպագրվել է շուրջ 65 ոգ. անուն գիրք է գրողույկ: Ամեն տարի լույս է տեսնում մի քանի տասնյակ անուն գիրք եւ գրքույկ, մոտ 300 (1999) անուն պարբերականներ:

1920–90-ական թթ. Հայաստանից դուրս հայկական տպագրության գլխավոր կենտրոններ էին Կ.Պոլիսը, Բեյրութը, Կահիրեն, Փարիզը, Թեհրանը, Նոր Ջուղան, վերջին շրջանում նաեւ Լոս Անջելեսը: Հայկական տպագրված բոլոր գրքերի եւ գրքույկների մոտավոր քանակը 130 ոգ., պարբերականներինը՝ մոտ 4000 անուն է:

Երևանի Ալ. Մյասնիկյանի անվան հանրապետական (հանրային) գրադարանը, այժմ Ազգային գրադարանը, հայերեն տպագիր խոսքի ամենահարուստ գրապահոցն է աշխարհում, հանրապետության խոշորագույն գրադարանը, գրադարանագիտության, մատենագիտության, գրքի պատմության գիտահետազոտական հաստատություն և Հայաստանի գրադարանային ցանցի մեթոդական աշխատանքների ու հանձնարարական մատենագիտության կենտրոն: Հիմնադրվել է Երևանի գավառական ուսումնարանի (1832), հետագայում արական գիմնազիայի (1881) գրադարանների 18 հազար միավոր գրքային ֆոնդերի հիմքի վրա: Հետագայում 1921 թվականի մայիսի 11ի որոշմամբ այդ գրադարանի հիմքի վրա կազմավորվել է հանրապետական (հանրային) գրադարանը, որի պաշտոնական բացումը տեղի է ունեցել 1922 թվականի նոյեմբերի 7ին:

Հանրապետական գրադարանը 1925 թվականից կրում է Ալեքսանդր Մյասնիկյանի անունը: 1922 թվականին գրադարանն ուներ 40 հազար միավոր գրքային ֆոնդ: Այժմ գրադարանի գրքերի թիվն անցնում է 7 միլիոնից:

Շար. 3 եւ վերջ



Գրողների միության հրատարակչության կողմից նայեմքերին լույս է տեսել երիտասարդ գրող Աստղիկ Օհանյանի "Forgive me for not forgetting me" (Ներիր ինձ՝ ինձ չմոռանալու համար) գիրքը՝ գրված անգլերեն լեզվով:

Աստղիկ Օհանյանը 21 տարեկան է: Ավարտել է Վ.Բրյուսովի անվան Երևանի պետական լեզվաբանական համալսարանը: Սովորում է Երևանի պետական համալսարանի մագիստրատուրայում: Ընթերցողի դատին հանձնված գիրքը երիտասարդ և խոստումնալից գրողի առաջին մեծածավալ ստեղծագործությունն է, որը խորհելու և մարդկային արժեքները վերագնահատելու առիթ է տալիս:

Գիրքը նվիրված է երիտասարդ երաժշտագետ Էլիզաբեթի և տաղանդավոր երիտասարդ նկարիչ Ալեքսի սիրո պատմությանը: Թեև երիտասարդներից յուրաքանչյուրը իր դեռևս ոչ այնքան երկար կյանքում հասցրել է տանել վիշտ կամ հիասթափություն, սակայն երկուսն էլ ապրում են ապագայի վերաբերյալ պայծառ հույսերով ու սպասումներով: Նրանք սովորական մարդիկ են, որոնց հասու են կյանքի և ուրախությունները, և տխրությունն ու թախիծը: Նրանց համար երկնքում փայլում է վառ արևը, իսկ երկինքն անամպ է և լուսավոր: Երկու երիտասարտ, տաղանդավոր մարդ հանդիպում են, գտնում իրար: Թվում է, որ ողջ աշխարհն է ծաղկել նրանց սիրո առաջ, և գույզին սպասվում է անամպ ու երջանիկ կյանք: Բայց նրանց վիճակված չէ երկար ժամանակ վայելել իրենց սերը, որ թվում էր ամենակարող ու ամենագոր. մահվան անգութ սրի առջև ամեն ինչ անգոր է: Ծանր հիվանդությունը կտրում է Ալեքսի կյանքի թելը, և մշուշով է պատվում նրա սիրած աղջկա կյանքը: Հինգ տարի աղջիկը փորձում է համակերպվել կատարվածի հետ, շարունակում է սիրել և անմար պահել իր սիրած տղայի հիշատակը: Ծանր հոգեկան ապրումների գնով երիտասարդ աղջիկն ուժ է գտնում իր մեջ՝ ապրելու, անցնելու դաժան իրականության միջով ու պայծառ հայացքով նայելու կյանքին և մարդկանց. նա ուժ է գտնում իր մեջ՝ ապրելու և պատմելու մարդկանց իր սիրած տղայի մասին, անմար պահելու նրա մասին հիշողությունը նախ՝ իր, ապա նաև՝ մյուսների հոգում: Եվ հինգ տարի անց նա նորից հանդիպում է իր սիրած տղային՝ իրենց գրած և ապագային ուղղված նամակների միջոցով: "Ներիր ինձ՝ ինձ չմոռանալու համար". միակ բանը, որ մահացող երիտասարդը կարող էր ավանդել իր սիրած աղջկան, որին խոստացել էր սիրել "մինչև լուսին և հետ", քանի որ գիտեր՝ իր հետ տանելու էր նրա անսահման սերը:

Գիրքը գրված է պատանեկան անմիջականությամբ, տոգորված է անանց սիրո և հավատարմության վեհ զգացմունքներով: Հեղինակը ինքն էլ բաժանում է իր հերոսների ցավն ու ուրախությունը, հոգսն ու տխրությունը, հավատարմության ոգին: Հերոսների ապրումները, տվյալանքներն ու սպասումները ներկայացված են խոր հուզականությամբ, ինչը գրավում է ընթերցողին, տանում իր հետևից: Գիրքը կարդալուց հետո, երբ վերջապես չորանում են արցունքները, մարդու հոգում երկար ժամանակ մնում է մի լուսավոր թախիծ՝ չկայացած երջանկության համար, ափսոսանք՝ չստեղծված ընտանիքի համար, և միաժամանակ նաև ուրախություն՝ այն բանի համար, որ աշխարհում կան սրտեր, որ կարող են իրոք սիրել, հիշել և հիշեցնել... Կարծում ենք, որ գիրքը կհետաքրքրի հատկապես երիտասարդ սերնդին, պատանիներին, քանի որ այն իրենց նման պատանի և երազանքներով լի մարդկանց մասին է:

Շնորհավորում ենք սիրելի Աստղիկին՝ առաջին գրքի լույս տեսնելու կապակցությամբ: Հուսով ենք, որ տաղանդավոր աղջիկը դեռ բազմաթիվ հրաշալի ստեղծագործություններով կուրախացնի մեզ: Մենք սպասում ենք նոր գրքերի, սիրելի Ա ս ս ո ղ ի կ ...

Պրոֆ. Ծ. Պ. Աղայան
Այդ գաղափարախոսության առաջամարտիկներն էին Միքայել Մալբանդյանը և նրա հետևորդներ Չարություն Սրվաճյանը, Կարապետ Փանոսյանը և ուրիշներ: Նրանք, արտահայտելով հայ աշխատավոր ժողովրդի շահերը, նրա ազատագրական պայքարը կապում էին իտալական և համասլավոնական շարժումների հետ, զարգացնում էին ազատագրական պայքարի համընդհանուր ճակատ ստեղծելու գաղափարը:

Միքայել Նալբանդյանը հատկապես ձգտում էր ազգային-ազատագրական շարժումները սոցիալական և քաղաքական պայքարի հունի մեջ դնել: 1860 թ. նոյեմբերի 20-ից մինչև դեկտեմբերի 21-ը և 1861 թ. նոյեմբերի 20-ից մինչև դեկտեմբերի 27-ը Կ. Պոլսում գտնվելով, նա հանդիպումներ է ունեցել շատ գործիչների հետ և քննարկել այդ օրերի հուզող հարցերը: Ֆըրանսիայում, Անգլիայում, Իտալիայում և Հնդկաստանում գտնվելու ժամանակ ևս նա հայ գործիչների հետ քննարկում էր հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժմանը համադեմոկրատական ընթացք տալու խնդիրները: Կ. Պոլսում իր բարեկամների հետ զրուցելիս Մ. Նալբանդյանը խորհուրդ էր տալիս հիմնել գաղտնի կոմիտե, ուշադրությունը կենտրոնացնել առայժմ Կիլիկիայի և Չեթյունի վրա, լայն կապեր հաստատել Եվրոպայի և Ռուսաստանի հեղափոխականների հետ: Այդ հայտնի է դառնում Սերովբե Թագվորյանի՝ 1862 թվականի մայիսի 14-ին Մ. Նալբանդյանին հղած ծածկագիր նամակից:

Նալբանդյանը արևմտահայության պայքարը կապում էր ճնշված ժողովուրդների ընդհանուր պայքարի և նրանց քաղաքական ու տնտեսական ազատագրության հետ: Երկրագործության մեջ նույնպես Մ. Նալբանդյանը Արևելյան Հայաստանի ազատագրումը կապում էր Ռուսաստանի բոլոր ժողովուրդների հեղափոխական պայքարի միասնության հետ: Հայ ժողովրդի երկու հատվածների ազատագրության իրագործումը Մ. Նալբանդյանը կապում էր ոչ թե Եվրոպական տերությունների հովանավորության, այլ ասիական և Եվրոպական ճնշված ժողովուրդների ապստամբության և, հատկապես ցարիզմի տապալման հետ: Ահա ինչու նա ընդգծում էր, որ «Ռուսիո ազատությունը ընդհանուր մարդկության ազատության վերաբերմամբ մեծ խորհուրդ ունի»:

Մ. Նալբանդյանի գինակիցներ Զ. Սրվաճյանը, Զ. Քյաթիայանը, Ս. Թագվորյանը, Գր. Զիլինկիրյանը ակտիվ գործունեություն ծավալեցին Արևմտյան Հայաստանում և, հատկապես Չեթյունում՝ ազգային-ազատագրական շարժում բորբոքելու ուղղությամբ: Իտալիայում գտնվելու ժամանակ Մ. Նալբանդյանը հանդիպել է Մաձձինին և ջանքեր գործադրել, որպեսզի իր արևմտահայ համախոհներին կապի իտալական հեղափոխականների հետ:

Մի շարք տվյալներից հայտնի է դառնում, որ Մ. Նալբանդյանը և Սերուն-Սուլվեիչը ռուս էմիգրանտ բարեկամներից հանձնարարություն են ունեցել գլխավորել Կովկասում և Թուրքիայում պատրաստվող ազգայինազատագրական շարժումները: Մ. Նալբանդյանը հատկապես լուրջ ուշադրություն էր դարձնում նյութական միջոցներ հավաքելուն, զենք ու զինամթերք ձեռք բերելուն: Ուշագրավ է, որ Նալբանդյանը թե՛ Եվրոպայում և թե՛ Ռուսաստանում մեծ հետաքրքրությամբ էր ուսումնասիրում վառող և զենք պատրաստելու տեխնիկան: